

Գործարար շահերի պաշտպանության ցանցի տեղեկատու

Իրադարձություններ/Նորություններ/Հայտարարություններ /Հոդվածներ/Օրենսդրական փոփոխություններ
ԻՐԱԳԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ **ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**



Գործարար շահերի պաշտպանության ցանցը կազմակերպեց և անց կացրեց աշխատաժողով՝ «Ազգային գործարար օրակարգի ձևավորման մեթոդաբանությունը և գործընթացը» թեմայով

Մ.թ. դեկտեմբերի 15-ին տեղի ունեցավ Գործարար շահերի պաշտպանության ցանցի աշխատաժողովը նվիրված Հայաստանում Ազգային գործարար օրակարգի ԱԳՕ ձևավորման և զարգացման խնդիրներին: Ազգային գործարար օրակարգի ձևավորման գործընթացը իրենից ներկայացնում է գործարար միջավայրի զարգացմանը խոչընդոտող առավել կարևոր և հրատապ խնդիրների բացահայտում դրնաց լուծման հնարավոր տարբերակների քննարկում և իրականացում: ԱԳՕ-ի կարևորությունը և դրա մշակման փորձը տարբեր երկրներում ներկայացրեց Մասնավոր ձեռնարկատիրության միջազգային կենտրոնի ԱՄՆ փորձագետ Քամելիա Բուլատը, որը մասնավորապես ներկայացրեց ԱԳՕ-ի ներդրման առանձնահատկությունները Մոլդովայում, Մոնտենեգրոյում, Բելառուսում և այլն: Տիկ. Բուլատը անդրադարձավ նաև ԱԳՕ-ի մեթոդաբանությանը և իրականացման հիմնական փուլերին: Աշխատաժողովը անցավ բուռն քննարկումների և հարցադրումների պարզաբանման մթնոլորտում և մասնակիցների կարծիքով էական պատկերացում տվեց աշխարհի շատ երկրներում գործող գործարար շահերի պաշտպանության նման մոդարարական գործիքի կիրառման վերաբերյալ: Քննարկվեց նաև Հայաստանում նման գործիքի կիրառման հնարավորությունները և առանձնահատկությունները: Մասնակիցների կողմից բարձրացված որոշ մեկնաբանություններ և առաջարկություններ ի մի կերպվեց և հաշվի կառնվեց Հայաստանում ԱԳՕ-ի գործընթացի իրականացմանը: Ցանցի անդամ կառույցների ներկայացուցիչները շնորհակալություն հայտնեցին Ք. Բուլատին աշխատաժողովը մասնակիցների առաջ քաշած հարցադրումները պատշաճ կերպով մեկնաբանելու համար:



Գործարար շահերի պաշտպանության ցանցը կազմակերպեց և անց կացրեց աշխատաժողով՝ «Ազգային գործարար օրակարգի ձևավորման մեթոդաբանությունը և գործընթացը» թեմայով

ՃՄԳ-Հ ծրագրի նոր փուլը կմեկնարկի շուտով

«Արմենիա Մարիոթ» հյուրանոցում տեղի ունեցավ ԳՇՊՅ-ի անդամ Համայնքների ֆինանսիստների միավորման հրատարակած «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում» գրքերի շնորհանդեսը

Վերջին տարիներին փոխվել է խոշոր բիզնեսի հարկային պարտավորությունների կատարման պատկերը. Արսեն Ղազարյան

2016թ. -ից ՓՄՁ-ներին տրամադրվող վարկի գումարը հասնելու է մինչև 7 մլն. դրամի

ԵՏՄ մաքսային օրենսգրքի ընդունման ժամկետները դեռ պարզ չեն

Կառավարությունում շարունակվում են ՀՀ հարկային օրենսդրության բարեփոխումների վերաբերյալ քննարկումները

Վարչապետը հավանություն է տվել արտահանման խթանման խորհուրդ ստեղծելու առաջարկությանը

Հայաստանի ֆինանսների նախարարությունը կկրճատի հարկային ծառայությունների թիվը

Հայաստանը ունի ՓՄՁ զարգացման ազգային նոր ռազմավարություն



Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի գործադիր տնօրեն Գեղամ Պետրոսյանը և Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA-ՃՄՀԳ) գլխավոր խորհրդական Ռեդա Տակաֆումին ստորագրեցին ՃՄՀԳ «Տեղական արտադրության զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնություն» համատեղ ծրագրի երկրորդ փուլի մեկնարկի արձանագրությունը: Այն նախատեսվում է սկսել 2016թ. հուլիս-օգոստոս ամիսներին: Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը և ՃՄՀԳ-ն Օրագրի առաջին փուլն իրականացրել են 2013-2015թթ.: Գործակալության փորձագետները ծրագրի արդյունավետության գնահատման արդյունքում առաջին փուլի իրականացումը բարձր էին գնահատել: Նրանք նշել էին, որ այն աշխարհի 20-ից ավելի երկրներում «Մեկ գյուղ, մեկ արտադրանք» հայեցակարգով (OVOP) ՃՄՀԳ իրականացրած ծրագրերից լավագույնների շարքում է: Օրագրին ուղղված է տեղական ապրանքանիշերն ավելի մրցունակ և որակյալ դարձնելուն, ինչպես նաև միջազգային, այդ թվում՝ Ճապոնիայի շուկայում հայկական արտադրանքի առաջնությունը:

2013թ. մայիսին մեկնարկած հայ-Ճապոնական ծրագրի, ինչպես նաև հայկական «Մեկ գյուղ, մեկ արտադրանք» (One Village-One Product-OVOP) շարժում-հայեցակարգի ներդրումից ի վեր Հայաստանի մարզերում Օրագրի շրջանակում ուսուցողական և խորհրդատվական աջակցություն է ստացել 296 սկսնակ և գործող գործարար: Նրանցից 139 մասնակցել է տարբեր տեխնոլոգիական դասընթացների, 90 ձեռնարկատեր՝ հայկական «Մեկ գյուղ, մեկ արտադրանք» հայեցակարգի վրա հիմնված շուկայավարման և ապրանքանշման դասընթացների, իսկ 67 սկսնակ մասնակցել է զբոսաշրջային ծառայությունների և հարակից ոլորտների զարգացման դասընթացների: Սկսնակ գործարարների դասընթացներից հետո ստեղծվել է 11 նոր հյուրաստանային բիզնես, որոնք Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կողմից ստացել են ընդհանուր առմամբ 46,5 մլն դրամի վարկային երաշխավորություն: Ելու 21 սկսնակ գործարար կֆինանսավորվի 2016թ. ընթացքում՝ 74 մլն. դրամի չափով: 2016թ.-ից ՓՄՁ-ներին տրամադրվող վարկի գումարը հասնելու է մինչև 7 մլն. դրամի:

Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն հիմնադրամի գործադիր տնօրեն Գեղամ Պետրոսյանն ամփոփեց 2015թ. իրականացված աշխատանքները և ներկայացրեց իրականացվող ծրագրերի ընթացքը:

Նա նշեց, որ ՓՄՁ ՋԱԿ-ի 2015 թ. հոգաբարձուների խորհուրդը տարեկան շրջանակում նիստի ընթացքում հաստատել է ՀՀ էկոնոմիկայի նախարար, ՓՄՁ ՋԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ Կարեն Հճմարիտյանի առաջարկը՝ ՓՄՁ-ներին տրամադրվող վարկի շեմը 5 մլն ՀՀ դրամից հասցնել մինչև 7 մլն դրամ:

Գեղամ Պետրոսյանը տեղեկացրեց, որ պետական աջակցության 2015թ. ծրագրի շրջանակներում ՀՀ 2015թ. պետական բյուջեից հատկացվել է 152,300,000 դրամ:

«Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցության, ոլորտային աջակցության, գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցության, տեղական տնտեսական զարգացման ուղղություններով աջակցություն է տրամադրել շուրջ 6,000 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների: Ընդհանուր առմամբ, Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի աջակցության բոլոր ուղղություններով տրամադրվել է 13,000-ից ավելի աջակցություն: Աջակցության ավելի քան 95%-ն ուղղվել է մարզերի գործող և սկսնակ ՓՄՁ-ներին»,-նշեց Պետրոսյանը:

ՀՀ բոլոր մարզերում իրականացված «Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության» ծրագրի շրջանակներում իրականացված գործարարությամբ զբաղվելու դասընթացներին և խորհրդատվություններին մասնակցել են 403 սկսնակ գործարարներ: Արդյունքում, իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած սկսնակներին ֆինանսական աջակցություն են ստացել և իրենց գործունեությունն են սկսել 176-ը: Ուսուցողական աջակցություն է ստացել 407 ձեռնարկատեր:

2014թ. հոկտեմբեր ամսից մեկնարկել է «ՓՄՁ սուբյեկտների կողմից նոր սերնդի ՀԴՄ-ների ձեռքբերման արժեքի փոխհատուցման ծրագիրը»: 2015թ. ընթացքում Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ին տրամադրված դրամագլխի հաշվին սուբսիդավորվել է 611 ՓՄՁ-ի հայտ:

«Անցած տարի Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը ներկրել և համայնքներին, ֆերմերներին և կազմակերպություններին վաճառել կամ լիզինգով է տրամադրել 26 միավոր գյուղտեխնիկա: Տեխնիկական շահառուներին է տրամադրվել շուկայականից շուրջ 30% ցածր գնով: Համայնքներին տրամադրված 4 «Նիվո-էֆեկտ» հասցահատիկահավաք կոմբայնի արժեքի մի ամսը կառավարության որոշմամբ սուբսիդավորվել է պետությունից հաշվին»,-շեշտեց Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի գործադիր տնօրենը:

Տեղական տնտեսական զարգացման ծրագրի շրջանակում վերլուծվել են ՀՀ 35 գյուղական համայնքների մրցակցային առավելությունները: Բացի այդ, ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի շրջանակներում 13 համայնքներում իրականացվել են ներակառուցվածքային զարգացման ծրագրեր: Ընդհանուր առմամբ, այս ուղղությամբ իրականացվել է շուրջ 113 մլն ՀՀ դրամի ներդրում:

Տրամադրվել է 11857 տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն:

67 ՓՄՁ-ների չրագործության, ջերմոցային և սառնարանային տնտեսություններ գործարկելու ուղղություններով տրամադրվել է աջակցություն տեխնոլոգիական դասընթացների և անհատական խորհրդատվությունների միջոցով: 25 սկսնակ ՓՄՁ-ների չրանցների, ջերմոցների և սառնարանային տնտեսությունների հիմնման նպատակով սարքավորումների և նյութերի ձևով տրամադրվել են դրամաշնորհներ:

«Շարունակվել է ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի իրականացումը, «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի և ՄԱԶԾ ծրագիրը, «Ձեռնարկատիրական աշխատանք Հայաստանի երիտասարդության համար» Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի և ՄԱԿ-ի արդյունաբերության զարգացման կազմակերպության համատեղ ծրագիրը, ՄԱԿ-ի փախստականների հարցերով զբեռացված հանձնակատարի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ փախստականների աջակցության ծրագիրը, Ասիական զարգացման բանկի տեխնիկական աջակցության շրջանակներում «Կանանց ձեռներեցության աջակցություն» ծրագիրը, ինչպես նաև մի շարք այլ ծրագրեր տեղական և միջազգային գործընկերների հետ: Ավարտվել է «Տեղական արտադրության զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնություն» Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի և Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության համատեղ ծրագրի առաջին փուլը»,-տեղեկացրեց Գեղամ Պետրոսյանը:

2015 թ. դեկտեմբերի 10-ին Բյուտսելում ԵՄ ներքին շուկայի, արդյունաբերության, ձեռներեցության և ՓՄՁ հարցերով հանձնակատար Էլբիեթա Բիենկոսովկան և ՀՀ էկոնոմիկայի նախարար Կարեն Հճմարիտյանը ստորագրեցին ԵՄ Ձեռնարկությունների և փոքր ու միջին ձեռնարկությունների մրցունակություն-COSME (Competitiveness of Enterprises and Small and Medium-sized Enterprises Programme) ծրագրին Հայաստանի անդամակցության պայմանագիրը: Այն ուժի մեջ է մտել հունվարի 1-ից: Օրագրին այս պահին մասնակցում են նաև Մոնտենեգրոն, Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետությունը, Մոլդովան, Թուրքիան, Ալբանիան և Սերբիան:

2014-2020թթ. Համար նախատեսված ծրագիրն ուղղված է ՓՄՁ ոլորտի զարգացմանն ու ՓՄՁ-ներին ուղղակի աջակցությանը շուկաների հասանելիության, ֆինանսական ռեսուրսների ապահովման, ձեռնարկատիրական կրթության, գործարար միջավայրի բարելավման, երիտասարդների և կանանց ձեռներեցության խթանման, ՓՄՁ-երի մրցունակության զարգացման համար ավելի բարենպաստ պայմանների ապահովման միջոցով: Ծրագրի ընդհանուր բյուջեն բոլոր անդամ երկրների համար 2,3 միլիարդ եվրո է:

Հայաստանի մասնակցությունը COSME ծրագրին Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ին հնարավորություն կտա համաֆինանսավորում ստանալ Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՉԵՑ) գործունեության շրջանակում: Դա էականորեն կբարձրացնի Հայաստանում ՉԵՑ արդյունավետությունը:

2015թ. ավարտին ամփոփվեցին Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության ծրագրի առաջին փուլի արդյունքները, ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ 2016թ. նոր փուլի մեկնարկի համար: Դրական է գնահատվել նաև ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության (ՄԱԱԶԿ) Հայաստանում երիտասարդների ձեռներեցության աջակցության ծրագրի առաջին փուլը: Մեկնարկել է ծրագրի երկրորդ փուլ նախաձեռնելու բանակցությունը:

Ընդլայնվել է նաև մյուս միջազգային գործընկեր կազմակերպությունների հետ գործակցությունը, որի շնորհիվ կընդլայնվի ՓՄՁ-ներին տրամադրվող աջակցությունը: Նոր ծրագրերի ընթացքի և ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրի արդյունքների մասին Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը կտեղեկացնի պարբերաբար:

Տեղի ունացավ ԳՇՊՅ-ի անդամ Հայաստանի ֆինանսիստների միավորման հրատարակած «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում» բեմայով գրքերի ժողովածուի շնորհանդեսը այսատանը կունենա նորարարության ազգային ռազմավարություն



Նոյեմբերի 3-ին «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում տեղի ունեցավ Համայնքների ֆինանսիստների միավորման հրատարակած Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2012թ. և 2013թ.), գիրք 6 և Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2014թ.), գիրք 7 գրքերի շնորհանդեսը, որին մասնակցում էին ՀՀ ՏԿԱԲՆ, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ և անկախ փորձագետներ:

Գրքերը հրատարակվել են ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող Համատեղ ծրագրի շրջանակներում և նվիրված են ՀՀ տեղական ինքնակառավարման 2012-2014 թթ. բարեփոխումների գնահատմանը:

Վերջին տարիներին փոխվել է խոշոր բիզնեսի հարկային պարտավորությունների կատարման պատկերը. Արսեն Ղազարյան



Այն հարկատուներն, ովքեր կորսելու են ագրեսիվ հարկային պլանավորման վարքագիծ էլ քիչ կհաշվարկեն հարկերը, նրանց նկատմամբ կկիրառվի վարչարարություն: Այս մասին, այսօր՝ հունվարի 20-ին, 515 խոշոր բիզնեսի ներկայացուցիչների հետ աշխատանքային խորհրդակցության ընթացքում նշել է Ֆինանսների նախարարության Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության պետ Ռաֆիկ Մաշադյանը: Հանդիպման ընթացքում ամփոփվել են 2015-ի արդյունքները և ներկայացվել են 2016 թվականի ընթացքում ինչպես տեսչության, այնպես էլ բոլոր խոշոր հարկ վճարողների առջև ծառայած մարտահրավերները:

Խորհրդակցության ժամանակ մասնավորապես նշվել է, որ տեսչությունում հաշվառված հարկ վճարողների կողմից նախորդ տարի պետական բյուջե է վճարվել 383,3 միլիարդ դրամ հարկային եկամուտ, ինչը նախորդ տարվա նկատմամբ ավել է 9 տոկոսով, այդպիսով պետական բյուջեի եկամտային մասի հիմնախնդիրները գլխավորապես լուծվել են խոշոր հարկ վճարողների եւ ամենից առաջ՝ տվյալ տեսչությունում հաշվառված հարկատուների վճարած եկամուտների արդյունքում: Խորհրդակցության մասնակիցների ֆինանսների նախարարի տեղակալ Արմեն Ալավերդյանը ներկայացրել է 2016 թվականի բյուջետային մարտահրավերները, մասնավորապես բյուջետային լրացուցիչ եկամուտների սահմանափակումները՝ կապված ՓՄՁ-ների, գործող հարկային արտոնությունների, տնտեսության ճյուղային կառուցվածքի հետ, հետևաբար եկամուտների ապահովման առումով ընթացիկ տարում շեշտադրումը կատարվելու է հիմնականում խոշոր բիզնեսից անկախվող եկամուտների վրա: Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության պետ Ռաֆիկ Մաշադյանը ներկայացրել է այն հարկային ռիսկերը, որոնք առկա են առանձին հարկ վճարողների մոտ՝ կապված շրջանառությունների անկման, գնային խախտումների, հարկային բեռի չհիմնավորված նվազեցումների, իրական եկամուտների թերհայտարարման, շահութաբերության չհիմնավորված մակարդակի, հարկային վնասների եւ այլ երևույթների հետ:

Հասկապես կարելով է խոշոր հարկ վճարողների գործարքներ փաստաթղթավորմանը ներկայացվող պահանջների կատարումը: Խորհրդակցության ընթացքում նշվել է, որ քիչ չեն այն դեպքերը, երբ հարկային ռիսկերը կապված են ոչ թե տնտեսության այս կամ այն ճյուղի զարգացման առանձնահատկությունների հետ, այլ պայմանավորված են գործող տնտեսվարման պայմաններում հենց բիզնեսի կողմից ցուցանիշները կամ հարկային եկամուտները միտումնավոր քիչ վճարելու ցանկությամբ: «Այն հարկատուներն, ովքեր կորստեր են ագրեսիվ հարկային պլանավորման վարքագիծ է քիչ կհաշվարկեն հարկերը, նրանց նկատմամբ կկիրառվի վարչարարություն», - ընդգծել է Ռաֆիկ Մաշադյանը:

Հայաստանի գործարարների և արդյունաբերողների միության նախագահ Արսեն Ղազարյանի գնահատմամբ՝ վերջին տարիներին էապես փոխվել է խոշոր բիզնեսի հարկային պարտավորությունների կատարման պատկերը, ինչը պետություն-բիզնես փոխհարաբերությունների ամրապնդման արդյունք է: «Հավասար մրցակցային դաշտի ստեղծումը նպաստում է հարկային պարտավորությունների պատշաճ կատարմանը»:

«Արվա-Մեան» ԲԲԸ գլխավոր տնօրեն Պարույր Հակոբյանի խոսքով՝ խոշոր բիզնեսի հետ պահանջարկի դարձած հանդիպումը գործընկերային դեր է խաղում Ֆինանսների նախարարության և հարկ վճարողների հետ փոխհարաբերություններում: «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ վարչության նախագահի տեղակալ-ֆինանսական դեպարտամենտի տնօրեն Մանվել Մահալյանի դիտարկմամբ՝ պարբերական բնույթ կրող նման հանդիպումներում բիզնեսից հնչող մի շարք հարցադրումներ հստակեցվում և օպերատիվ լուծումներ են ստանում:

NEWS.am

2016թ.-ից ՓՄՁ-ներին տրամադրվող վարկի գումարը հասնելու է մինչև 7 մլն դրամի

Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն հիմնադրամի գործադիր տնօրեն Գեղամ Պետրոսյանն ամփոփեց 2015թ. իրականացված աշխատանքները և ներկայացրեց իրականացվող ծրագրերի ընթացքը:

Նա նշեց, որ ՓՄՁ ԶԱԿ-ի 2015 թ. հոգաբարձուների խորհուրդը տարեկերջյան նիստի ընթացքում հաստատել է ՀՀ էկոնոմիկայի նախարար, ՓՄՁ ԶԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ Կարեն Ճշմարիտյանի առաջարկը՝ ՓՄՁ-ներին տրամադրվող վարկի շեմը 5 մլն ՀՀ դրամից հասցնել մինչև 7 մլն դրամ:

Գեղամ Պետրոսյանը տեղեկացրեց, որ պետական աջակցության 2015թ. ծրագրի շրջանակներում ՀՀ 2015թ. պետական բյուջեից հատկացվել է 152,300,000 դրամ:

«Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցության, ոլորտային աջակցության, գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցության, տեղական տնտեսական զարգացման ուղղություններով աջակցություն է տրամադրել շուրջ 6,000 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների: Ընդհանուր առմամբ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի աջակցության բոլոր ուղղություններով տրամադրվել է 13,000-ից ավելի աջակցություն: Աջակցության ավելի քան 95%-ն ուղղվել է մարզերի գործող և սկսնակ ՓՄՁ-ներին», - նշեց Պետրոսյանը:

ՀՀ բոլոր մարզերում իրականացված «Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության» ծրագրի շրջանակներում իրականացված գործարարությամբ զբաղվելու դասընթացներին և խորհրդատվություններին մասնակցել են 403 սկսնակ գործարարներ: Արդյունքում, իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած սկսնակներից ֆինանսական աջակցություն են ստացել և իրենց գործունեությունն են սկսել 176-ը: Ուսուցողական աջակցություն է ստացել 407 ձեռնարկատեր:

2014թ. հոկտեմբեր ամսից մեկնարկել է «ՓՄՁ սուբյեկտների կողմից նոր սերնդի ՀԴՄ-ների ձեռքբերման արժեքի փոխհատուցման ծրագիրը»: 2015թ. ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ին տրամադրված դրամագլխի հաշվին սուբսիդավորվել է 611 ՓՄՁ-ի հայտ:

«Անցած տարի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ներկրել է համայնքներին, ֆերմերներին և կազմակերպություններին վաճառել կամ լիզինգով է տրամադրել 26 միավոր գյուղտեխնիկա: Տեխնիկական շահառուներին է տրամադրվել շուկայականից շուրջ 30% ցածր գնով: Համայնքներին տրամադրված 4 «Նիվա-էֆեկտ» հացահատիկահավաք կոմբայնի արժեքի մի մասը կառավարության որոշմամբ սուբսիդավորվել է պետբյուջեի հաշվին», - շեշտեց Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործադիր տնօրենը:

Տեղական տնտեսական զարգացման ծրագրի շրջանակում վերլուծվել են ՀՀ 35 գյուղական համայնքների մրցակցային առավելությունները: Բացի այդ, ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի շրջանակներում 13 համայնքներում իրականացվել են ենթակառուցվածքային զարգացման ծրագրեր: Ընդհանուր առմամբ, այս ուղղությամբ իրականացվել է շուրջ 113 մլն ՀՀ դրամի ներդրում:

Տրամադրվել է 11857 տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն:

67 ՓՄՁ-ների չրագործության, ջերմոցային և սառնարանային տնտեսություններ գործարկելու ուղղություններով տրամադրվել է աջակցություն տեխնոլոգիական դասընթացներին և անհատական խորհրդատվությունների միջոցով: 25 սկսնակ ՓՄՁ-ների չրանոցների, ջերմոցների և սառնարանային տնտեսությունների հիմնման նպատակով սարքավորումների և նյութերի ձեռք բերման տրամադրվել են դրամաշնորհներ:

«Շարունակվել է ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի իրականացումը, «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և ՄԱԶԾ ծրագիրը, «Ձեռնարկատիրական աշխատանք Հայաստանի երիտասարդության համար» Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և ՄԱԿ-ի արդյունաբերության զարգացման կազմակերպության համատեղ ծրագիրը, ՄԱԿ-ի փախստականների հարցերով զբաղվող հանձնակատարի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ փախստականների աջակցության ծրագիրը, Ասիական զարգացման բանկի տեխնիկական աջակցության շրջանակներում «Կանանց ձեռներեցության աջակցություն» ծրագիրը, ինչպես նաև մի շարք այլ ծրագրեր տեղական և միջազգային գործընկերների հետ: Ավարտվել է «Տեղական արտադրության զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնություն» Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության համատեղ ծրագրի առաջին փուլը», - տեղեկացրեց Գեղամ Պետրոսյանը:

2015 թ. դեկտեմբերի 10-ին Բյուրեղում ԵՄ ներքին շուկայի, արդյունաբերության, ձեռներեցության եւ ՓՄՁ հարցերով հանձնակատար էլժբիտա Բիենկովկան եւ ՀՀ էկոնոմիկայի նախարար Կարեն Զճարիտյանը ստորագրեցին ԵՄ Ձեռնարկությունների եւ փոքր ու միջին ձեռնարկությունների մրցունակություն-COSME” (Competitiveness of Enterprises and Small and Medium-sized Enterprises Programme) ծրագրին Հայաստանի անդամակցության պայմանագիրը: Այն ուժի մեջ է մտել հունվարի 1-ից: Ծրագրին այս պահին մասնակցում են նաև Մոնտենեգրոն, Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետությունը, Սլովակիան, Թուրքիան, Ալբանիան եւ Մերքիան:

2014-2020թթ. Համար նախատեսված ծրագիրն ուղղված է ՓՄՁ ոլորտի զարգացմանն ու ՓՄՁ-ներին ուղղակի աջակցությանը շուկաների հասանելիության, ֆինանսական ռեսուրսների ապահովման, ձեռնարկատիրական կրթության, գործարար միջավայրի բարելավման, երիտասարդների եւ կանանց ձեռներեցության խթանման, ՓՄՁ-երի մրցունակության զարգացման համար ավելի բարենպաստ պայմանների ապահովման միջոցով: Ծրագրի ընդհանուր բյուջեն բոլոր անդամ երկրների համար 2,3 միլիարդ եվրո է:

Հայաստանի մասնակցությունը COSME ծրագրին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ին հնարավորություն կտա համաֆինանսավորում ստանալ Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործունեության շրջանակում: Դա էականորեն կբարձրացնի Հայաստանում ՁԵՑ արդյունավետությունը:

2015թ. ավարտին ամփոփվեցին Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության ծրագրի առաջին փուլի արդյունքները, ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ 2016թ. նոր փուլի մեկնարկի համար: Դրական է գնահատվել նաև ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության (ՄԱԱԶԿ) Հայաստանում երիտասարդների ձեռներեցության աջակցության ծրագրի առաջին փուլը: Մեկնարկել է ծրագրի երկրորդ փուլ նախաձեռնելու բանակցությունը:

News.am

Կառավարությունում քննարկվել են արտահանման խթանմանն ուղղված հետագա քայլերը



Վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ կառավարությունում այսօր շարունակվել են տեղական արտադրանքի արտահանման խթանման վերաբերյալ քննարկումները: Կառավարության ղեկավարին, մասնավորապես, ներկայացվել են մի շարք առաջարկություններ՝ ստեղծվելիք արտահանման խթանման խորհուրդի գործունեության գերակա ուղղությունների, մեխանիզմների և գործիքակազմի վերաբերյալ: Ծավալվել է մտքերի շահագրգիռ փոխանակություն, արծարծվել են խորհրդի աշխատակարգին և գործունեության առաջնահերթություններին վերաբերող հարցեր: Վարչապետը, ամփոփելով քննարկումը, հորդորել է պատասխանատու գերատեսչությունների ղեկավարներին համատեղել ջանքերը՝ ոլորտում առաջընթաց արձանագրելու համար: Հովիկ Աբրահամյանը հանձնարարել է ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա լրամշակել փաստաթուղթը և ներկայացնել ստորագրման:

News.am

Վարչապետը հավանություն է տվել Արտահանման խթանման խորհուրդ ստեղծելու առաջարկությանը



Վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ կառավարությունում տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ժամանակ նախ ներկայացվել են հանրապետությունում ճանապարհների անցանելիության հետ կապված իրավիճակը, շուկայում տարբեր ապրանքատեսակների գների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների արդյունքները, կենսաթոշակների վճարման գործընթացը: ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը գեկուցել է, որ դեկտեմբերի 31-ից հանրապետության տարբեր շրջաններում տեղացած ձյան շերտը կազմել է 50 սմ-ից մինչև 1.20 մետր, ինչի հետևանքով ընդհանուր առմամբ փակվել է 109 ճանապահ: Օպերատիվորեն իրականացվել են ճանապարհների մշակման և մաքրման աշխատանքներ, իսկ ՏԿԱԲՆ փրկարար ծառայության գործողությունների արդյունքում ձյան տակ մնացած ավտոմեքենաներից դուրս է բերվել ավելի քան 800 մարդ: Ներկայում հետևողական աշխատանք է տարվում փակ և դժվարանցանելի ավտոճանապարհներն անցանելի դարձնելու ուղղությամբ: ՏԿԱԲ նախարարը նշել է, որ հանրապետության մյուս բոլոր ճանապարհները հիմնականում բաց են, կան դժվարանցանելի ճանապարհներ, որտեղ ևս կատարվում են համապատասխան աշխատանքներ: Կառավարության ղեկավարը կարևորել է ճանապարհների անցանելիության ապահովումը և հանձնարարել շարունակել օպերատիվ աշխատանքներն այդ ուղղությամբ:

ՀՀ տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանը գեկուցել է, որ տոնական օրերից առաջ և հետո ուժեղացված հսկողություն է իրականացվել սոցիալական նշանակություն ունեցող 20 անուն ապրանքների գների նկատմամբ: 2014 թ. դեկտեմբերի վերջի և 2015 թ. հունվարի նկատմամբ 2015-ի դեկտեմբերին և 2016 թ. հունվարի սկզբին գրեթե բոլոր ապրանքատեսակների գծով արձանագրվել է էական գնային նվազում, անգամ կան ապրանքատեսակներ, որոնց գները նվազել են 30-40 տոկոսով, օրինակ՝ ձվի, այլուրի: Շաբոյանը նշել է, որ ընդհանուր առմամբ, շուկան կայուն է, և գների բարձրացման դեպքեր չեն արձանագրվել: Վարչապետ Աբրահամյանը հորդորել է ՏՄՊՊՀ նախագահին՝ շարունակել ուսումնասիրությունները և դրանց արդյունքները ներկայացնել կառավարության աշխատակազմ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանն իր հերթին տեղեկացրել է, որ կենսաթոշակների վճարման նպատակով ժամանակին իրականացվել է անհրաժեշտ ֆինանսավորում: Կենսաթոշակների վճարման գործընթացն սկսվել է հունվարի 4-ից: Այն կշարունակվի հունվարի 5-ին, այնուհետև հունվարի 8-ից: ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար Երվանդ Զախարյանն էլ տեղեկացրել է, որ տոնական օրերին հանրապետությունում էներգամատակարարման գործընթացը կայուն կերպով է իրականացվել, առանց լուրջ խափանումների: Էներգամատակարարումն առանց խոչընդոտների և պատշաճ իրականացնելու նպատակով սահմանվել է հերթապահություն: Այնուհետև խորհրդակցության ընթացքում մանրամասն քննարկվել են արտահանման խթանմանն ուղղված ծրագրերն ու քայլերը: Ներկայացվել են տարբեր առաջարկություններ և գործիքակազմ՝ արտահանման տեմպերն ավելացնելու, նոր շուկաներ մուտք գործելու և արտահանումը դիվերսիֆիկացնելու ուղղությամբ: Վարչապետ Հովիկ Աբրահամյանը հավանություն է տվել արտահանման խթանման խորհուրդ ստեղծելու առաջարկությանը, որը կգրադիվ և՛ երկարաժամկետ խնդիրներով, և՛ համապատասխան ծրագրերի հիման վրա սեղմ ժամկետում օպերատիվ աջակցություն կցուցաբերի արտահանող ընկերություններին: Կառավարության ղեկավարն ընդգծել է, որ պետք է գնալ նման քայլերի՝ տնտեսություն առաջ մղելու համար և համոզմունք հայտնել, որ միասնական ջանքերի շնորհիվ կարձանագրվեն հաջողություններ:

ԵՏՄ Մաքսային օրենսգրքի ընդունման ժամկետները դեռ պարզ չեն

Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային օրենսգրքի ընդունման ժամկետները դեռ պարզ չեն՝ ԵՏՄ անդամ երկրների միջև առկա բազմաթիվ տարաձայնությունների պատճառով: Այս մասին հայտնել է Ռուսաստանի դաշնային մաքսային ծառայության ղեկավար Անդրեյ Բեյլանինովը՝ Բենիլյուքսի գործարար շրջանակների հետ սեմինարի ժամանակ, հաղորդում է «ՌԻԱ նովոստի»:

«Դեռևս շատ տարաձայնություններ կան: Ցանկություն կար այդ աշխատանքն ավարտել 2015-ի վերջին, բայց դեռ չի հաջողվում: Ես ժամկետ չեմ կարող ասել: Մենք այդ բանակցային գործընթացի ակտիվ մասնակիցներն են: Տարաձայնությունները բավական շատ են, երևի դրանում ոչ ոք մեղավոր չէ», - ասել է նա:

Բեյլանինովը նշել է, որ քանի դեռ չկա միասնական դիրքորոշում ԵՏՄ բոլոր անդամների միջև, վերջնական որոշման հնարավոր չէ հասնել: «Միշտ չէ, որ 5 երկրների դիրքորոշումները համընկնում են, բայց գործընթացն ընթանում է», - հավելել է նա:

ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդևը և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչները 2015-ի աշնանը հայտարարել էին, որ ԵՏՄ Մաքսային օրենսգրքը կընդունվի մինչև տարեվերջ, սակայն դա չհաջողվեց իրականացնել:

News.am

ՀՀ Ֆինանսների նախարարությունը կկրճատի հարկային ծառայությունների թիվը

Հայաստանի ֆինանսների նախարարությունը կկրճատի հարկային ծառայությունների թիվը: համապատասխան որոշումը կառավարությունը կայացրել է այսօրվա՝ հունվարի 29-ի իր նիստում:

Կոտայքի մարզում երկու տարածքային ստորաբաժանումները (Նայիրիի և Կոտայքի) կմիավորվեն Կոտայքի տեսչության մեջ՝ Աբովյան կենտրոնով:

Էջմիածնի և Արմավիրի տարածքային ծառայությունները կմիավորվեն Արմավիրի տարածքային տեսչության մեջ՝ Էջմիածնի կենտրոնով:

Որոշումն ուժի մեջ է մտնում 2016-ի մարտի 1-ից:

News.am

Հայաստանը ունի ՓՄՁ զարգացման ազգային նոր ռազմավարություն

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՓՈՔԻ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՆՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016-2018ԹԹ.

Բովանդակություն

- 1. Ներածություն----- 4
 - 1.1. Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում իրականացվող քաղաքականությունը ----- 4
- 2. Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի համառոտ նկարագրությունը ----- 6
 - 2.1. Օրենսդրական կարգավորում ----- 6

2.2. Փոքր բիզնեսի ակտի գնահատում ----- 7

2.3. «Գործարարությամբ զբաղվելը» գեկույցի ցուցանիշներ ----- 10

2.4. ՓՄՁ զարգացման խորհրդի դերը ----- 11

3. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ռազմավարական նպատակները և գործողությունների հիմնական ուղղությունները -
---13

Հավելված 1 – ՓՄՁ ոլորտի 2014թ. և «Գործարարությամբ զբաղվելը» գեկույցի 2015թ. ցուցանիշներ-----22

Հավելված 2 - Փոքր և միջին ձեռնարկատիրությունը SՀԶԿ և զարգացող երկրներում, նմանություններ և տարբերություններ -----26 Հավելված 3 - Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և մարտահրավերների (SWOT) վերլուծությունը Հայաստանի Հանրապետությունում -----31

1. Ներածություն

Փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) ոլորտը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը: ՀՀ կառավարության կողմից շարունակական քայլեր են իրականացվում ոլորտի զարգացման, մասնավորապես՝ ՓՄՁ պետական աջակցության համակարգի զարգացման ուղղությամբ:

2001թ. սկսած մշակվում և իրականացվում են ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրեր, որոնք նպատակաուղղված են իրականացնելու «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով ամրագրված ՓՄՁ ոլորտի պետական աջակցության հետևյալ ուղղությունները՝ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում, գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում), ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն, ֆինանսական և ներդրումային աջակցություն, տեղական տնտեսական զարգացում, ոլորտային բիզնեսներին աջակցություն, կանանց ձեռներեցությանն աջակցություն, տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում, միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ-ի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում:

Եթե նախորդ տարիներին ՓՄՁ զարգացման քաղաքականությունն ավելի շատ կենտրոնացած էր ՓՄՁ սուբյեկտների քանակական աճի և ռեսուրսների հասանելիության վրա, ապա առաջիկա տարիներին շեշտը դրվելու է գիտելիքի, որակի, ՓՄՁ սուբյեկտների և ընդհանրապես ոլորտի մրցունակության բարձրացման վրա:

Միաժամանակ, սույն ռազմավարությամբ իրականացված ընթացքում անհրաժեշտ կլինի պետական կառույցների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, մասնավոր հատվածի, միջազգային կազմակերպությունների կողմից հանրապետությունում ՓՄՁ ոլորտին առնչվող մշակվող և իրականացվող քաղաքականության, ծրագրերի, գործողությունների միասնական մոտեցում ապահովվել, ինչը համահունչ կլինի ռազմավարությամբ սահմանված նպատակներին և դրանց իրագործմանն ուղղված գործողություններին:

1.1. Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում իրականացվող քաղաքականությունը

ՓՄՁ բոլոր խնդիրների համար չկա մեկ միասնական լուծում: Շատ երկրներ հասել են հաջողության ՓՄՁ զարգացման ապակենտրոնացված քաղաքականությունների շնորհիվ, մյուսները՝ հատկապես փոքր երկրները, կարողացել են խթանել ՓՄՁ-ների մրցունակությունը ավելի կենտրոնացված մոտեցումների միջոցով:

Առաջիկա երեք տարիներին (2016-2018թթ.) ՓՄՁ զարգացման ռազմավարության գլխավոր նպատակը ներքին և միջազգային շուկաներում մրցունակ ՓՄՁ սուբյեկտների գործունեության ապահովումն է, ինչպես նաև Հայաստանի ՓՄՁ ոլորտի խթանման համար հիմնական կարևոր սկզբունքների ներկայացումը, փոքր և միջին բիզնեսի գործունեության համար մրցունակ միջավայր ապահովելը՝ կազմակերպությունների զարգացման և ձեռնարկատիրական գիտելիքի տարածման, ֆինանսական միջոցների հասանելիության, հարկային համակարգի պարզեցման և մասնավոր հատվածի հետ երկխոսության մեխանիզմների կատարելագործման, ինչպես նաև նորարարությունների և կայուն զարգացման խթանման միջոցով:

ՓՄՁ զարգացման քաղաքականության և ռազմավարության մշակման գործառնությունները վերապահված են ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը, որը հանդիսանում է նաև ՓՄՁ ոլորտի պետական աջակցության ծրագրերի մշակման համար պատասխանատու կառույց:

ՓՄՁ պետական աջակցության 2002թ. ծրագրի շրջանակներում, որպես ծրագրային միջոցառում, ՀՀ կառավարության 19.03.2002թ. N282 որոշմամբ հիմնադրվեց «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը (Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ), որը հանդիսանում է Հայաստանում ՓՄՁ ոլորտի պետական քաղաքականություն և ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացնող հիմնական կառույցը:

Հայաստանում ՓՄՁ զարգացման և աջակցության ծրագրերի մշակման ու իրականացման գործընթացում նշանակալի դեր ունեն նաև միջազգային և օտարերկրյա կազմակերպությունները և վերջիններիս կողմից իրականացվող մի շարք ծրագրերը:

2. Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի համառոտ նկարագրություն

Երկրում սոցիալական համերաշխության և տնտեսական աճի ապահովման երաշխավորված միջոցը զարգացած փոքր և միջին ձեռնարկատիրության առկայությունն է: Զբաղվածության ապահովման և, դրանով իսկ, աղքատության հաղթահարման խնդիրներն արմատական լուծումներ են ստանում միայն հասարակության միջին խավը ձևավորող փոքր և միջին կազմակերպությունների զարգացման միջոցով: Հայաստանի Հանրապետության կառավարության համար հրատապ է փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խնդիրների վերացումը՝ շարունակաբար բացահայտելով և ներդնելով աջակցության առավել արդյունավետ մեխանիզմներ:

ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվական բազայի տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2014 թվականի ընթացքում գործունեություն են ծավալել 74365 ՓՄՁ սուբյեկտներ, որոնցից 68117-ը՝ գերփոքր, 5109-ը՝ փոքր և 1139-ը՝ միջին: Վերոնշյալ տնտեսվարող սուբյեկտների շրջանառության ընդհանուր ծավալը կազմել է 1565934 մլն. դրամ, իսկ վերջիններիս կողմից մուծված հարկերը՝ 237710 մլն. դրամ:

ՓՄՁ ոլորտի վերոնշյալ ցուցանիշները¹, տարանջատված գործունեություն ուղղորտներով, ներկայացված են Հավելված 1-ում՝ ըստ հարկ վճարողների քանակի, ըստ աշխատողների քանակի, ըստ շրջանառության ծավալների և ըստ մուծած հարկերի:

¹ ա) դասակարգման հիմնական պայմանն է աշխատողների քանակը, շրջանառության ծավալը, բ) ոլորտները ընտրված են ըստ 2012թ-ի ընդունված դասակարգման,

2.1. Օրենսդրական կարգավորում

Վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունները, երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունը նոր պահանջներ են ներկայացնում մասնավոր հատվածի, մասնավորապես փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ուղղությամբ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն էր առաջացել վերանայել և հստակեցնել Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման գործող չափորոշիչները, ինչը հնարավորություն կտա Հայաստանում ՓՄՁ պետական աջակցության առավել նպատակային իրականացման, ՓՄՁ ոլորտին առնչվող վիճակագրության վարման գործընթացների պարզեցման ու կատարելագործման, ինչպես նաև Եվրամիության երկրներում գործող ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափանիշներին մոտեցման և ՓՄՁ ոլորտը բնութագրող ցուցանիշների համադրելիության ապահովման համար:

2011 թվականին Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ սահմանումը համապատասխանեցվեց Եվրամիության անդամ երկրներում գործող ՓՄՁ սահմանման հետ, որի համաձայն դասակարգումը կատարվեց՝ հիմք ընդունելով ՓՄՁ սուբյեկտներում ներգրավված աշխատողների թվաքանակը և տարեկան շրջանառությունը կամ ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Ներկայումս, տվյալ սահմանման համաձայն, ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են.

1) գերփոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 10 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 100 մլն դրամը.

2) փոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 50 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 500 մլն դրամը.

3) միջին՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 250 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չեն գերազանցում համապատասխանաբար 1500 մլն դրամը և 1000 մլն դրամը:

Հարկ է նշել, որ Եվրամիության չափորոշիչներ կիրառող գրեթե բոլոր երկրները հնարավորություն ունեն իրականացնելու համեմատական վիճակագրական վերլուծություն, ինչն ակնհայտորեն ստեղծում է տարբեր երկրներում ՓՄՁ ոլորտի զարգացման մակարդակի վերաբերյալ առավել հստակ պատկեր՝ երկրի տնտեսության մեջ ՓՄՁ ոլորտի տեղի ու դերի գնահատման առումով: Նման չափորոշիչներ կիրառող երկրներում, ՓՄՁ սուբյեկտների առավել հստակ տարանջատման շնորհիվ, հնարավորություն է ընձեռնում գերփոքր, փոքր և միջին կազմակերպությունների համար կիրառել համեմատաբար մեղմ հարկման ռեժիմ, իրականացնել առավել հասցեական պետական աջակցության միջոցառումներ և այլն:

2.2. Փոքր բիզնեսի ակտիվ գնահատում

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018թթ. ռազմավարության մշակման ընթացքում օգտագործվել են «Փոքր բիզնեսի ակտիվ» (ՓԲԱ) գնահատման 10 ուղղությունները, որոնց սկզբունքների ներդրման համար սույն ռազմավարությունը անուղղակիորեն գործիք է հանդիսանում: «Փոքր բիզնեսի ակտիվ» Եվրամիությունում մշակվել է 2008 թվականին՝ որպես փոքր և միջին ձեռնարկատիրության խթանման գլխավոր գործիք: Եվրոպական երկրներում «Փոքր բիզնեսի ակտիվ» գնահատումը փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնական փաստաթուղթն է հանդիսանում: ՓԲԱ-ն 10 սկզբունքների համախումբ է, որոնք պետք է հաշվի առնել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականություններ մշակելիս և իրականացնելիս ինչպես Եվրոպական Միության², այնպես էլ ազգային մակարդակներում: ՓԲԱ-ի նպատակն է բարելավել ձեռնարկատիրության նկատմամբ մոտեցումները՝ ՓՄՁ սուբյեկտների համար պարզեցնելով օրենսդրական և գործառնական միջավայրը և վերացնելով վերջիններիս զարգացման խոչընդոտները:

ՓԲԱ-ի հիմնական առաջնահերթություններն են.

- Ձեռներեցության խթանումը
- Օրենսդրական խոչընդոտների նվազեցումը
- Ֆինանսավորման հասանելիության բարձրացումը
- Շուկաների հասանելիությունը և բիզնեսի միջազգայնացումը:

Հայաստանի Հանրապետությունը ՓԲԱ գնահատմանը մասնակցում է 2012թ-ից: ՓԲԱ գնահատումը բաղկացած է 10 սկզբունքներից, որոնցից յուրաքանչյուրը ներառում է իրականացման համար նախատեսված մի շարք կոնկրետ գործողություններ: Այսպիսով, տվյալ սկզբունքները հստակ սահմանում են այն առաջնահերթությունները, որոնցով կարող են առաջնորդվել կառավարությունները՝ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը նպաստելու համար: 2016թ. նախնական գնահատման արդյունքների հիման վրա S22Գ կողմից իրականացված SWOT վերլուծությունը ներկայացված է ռազմավարության Հավելված 3-ում:

2011թ-ին ՓԲԱ-ի վերանայումից հետո³ ավելի մեծ նշանակություն է տրվել սկզբունքներից մեկին՝ «Սկզբում մտածեք փոքր» սկզբունքին: Վերջինս նաև սահմանվում է որպես ՓԲԱ-ի հիմնական սկզբունք (ԵՄ 2011): Տվյալ սկզբունքը պահանջում է ոչ միայն ՓՄՁ սուբյեկտների գործունեության իրավական և վարչարարական միջավայրի պարզեցում, այլև ներառում է փոքր և միջին ձեռնարկատիրության վրա ազդեցություն ունեցող քաղաքականությունների ընթացակարգերի ստուգում:

Քաղաքականություն մշակողների համար այն ապահովում է հստակ և կոնկրետ ուղղորդող հիմք ՓՄՁ սուբյեկտների գործունեությունը խթանելու համար: Հայաստանի Հանրապետությունում ՓԲԱ-ն և «Սկզբում մտածեք փոքր» սկզբունքը պետք է դառնան կողմնորոշման ուղղորդող շրջանակ՝ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականություն մշակելիս և իրականացնելիս: Այդ իսկ պատճառով, ՓԲԱ սկզբունքները ներառված են սույն ռազմավարության մեջ և արտացոլված են ռազմավարական նպատակների մեջ: Փոքր Բիզնեսի Ակտի 10 ուղղությունները հետևյալն են.

1. Ձեռնարկատիրության ուսումնասիրություն և կանանց ձեռներեցություն - Փոքր և միջին, ինչպես նաև ընտանեկան ձեռնարկատիրությունների համար ստեղծել զարգացմանը նպաստող միջավայր:
2. Մանկացումը և երկրորդ հնարավորությունը ՓՄՁ սուբյեկտների համար - Ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ «ազնիվ»

գ) քանի որ առանձին դիտարկվում են տվյալները ըստ ոլորտների, ապա մեկ հարկ վճարողի տվյալները մի քանի գործունեության տեսակ ունենալու դեպքում արտացոլվում են ամեն ոլորտում առանձին,

դ) տեղեկատվությունը տրամադրվում է ըստ 2015թ. մայիսի տեղեկատվական բազայում առկա տվյալների:

² EU 2008: Think Small First, A Small Business Act for Europe, Brussels 2008. See <http://eur-lex.europa.eu/legalcontent/>

³ Թուրքմենստանը զեկույցում ներառված չէ:

տնտեսավարողները, ովքեր սնանկացել են, կկարողանան երկրորդ հնարավորություն ստանալ:

3. ՓՄՁ քաղաքականության մշակման կարգավորման շրջանակ – Մշակել կանոնակարգեր «Սկզբում մտածեք փոքր» սկզբունքին համապատասխան:
4. ՓՄՁ սուբյեկտների համար գործառնական միջավայր – Իրականացնել ՓՄՁ սուբյեկտների կարիքներին արձագանքող պետական կառավարում:
5. ա) ՓՄՁ և սկսնակ ընկերությունների համար աջակցության մեխանիզմներ – Հաստատել ՓՄՁ սուբյեկտների կարիքներին արձագանքող պետական կառավարման գործիքներ:
բ) Պետական գնումներ – Հեշտացնել ՓՄՁ սուբյեկտների մասնակցությունը պետական գնումների համակարգում և ՓՄՁ սուբյեկտների համար լավագույն օգտագործել պետական աջակցության հնարավորությունները:
6. ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսավորման հասանելիություն – Հեշտացնել ՓՄՁ սուբյեկտների հասանելիությունը ֆինանսավորմանը և զարգացնել այնպիսի իրավական և գործարար միջավայր, որը կնպաստի առևտրային գործարքների ժամանակին վճարումներին:
7. Մտանդարտներ և տեխնիկական կարգավորումներ - Օգնել ՓՄՁ սուբյեկտներին առավելագույն օգուտներ քաղել ԵՄ Միասնական շուկայի առաջարկած հնարավորություններից:
8. ա) Ձեռներեցության հմտություններ – Նպաստել ՓՄՁ սուբյեկտների ձեռնարկատիրական հմտությունների արդիականացմանը և բոլոր տեսակի նորարարությունների կիրառմանը:
բ) ՓՄՁ-ների համար նորարարության քաղաքականություն
9. ՓՄՁ սուբյեկտները «կանաչ» տնտեսության մեջ - Խրախուսել ՓՄՁ սուբյեկտներին բնապահպանական մարտահրավերները հնարավորությունների վերածելու համար:
10. ՓՄՁ-ների միջազգայնացում – Խրախուսել և աջակցել ՓՄՁ սուբյեկտներին օգուտներ քաղել շուկաների աճից:

ՓԲԱ գնահատման արդյունքների հիման վրա ՓՄՁ զարգացմանն ուղղված ռազմավարական նպատակները ներառված են նաև յոթ հիմնական խմբերում, որոնց անդրադարձ կկատարվի ռազմավարության 3-րդ գլխում: Ռազմավարական նպատակների իրագործման համար ներկայացված ուղղությունները և ՏՀԶԿ կողմից իրականացված SWOT վերլուծությունը (Հավելված 3) հիմք է հանդիսանալու ՓՄՁ զարգացման քաղաքականության մշակման և իրականացման ընթացքում պետություն- մասնավոր հատված երկխոսության, ինչպես նաև միջազգային տարբեր կառույցների հետ համագործակցության համար:

2.3. «Գործարարությամբ զբաղվելը» գեկույցի ցուցիչներ

ՓՄՁ ոլորտի զարգացման վրա իր ազդեցությունն է թողնում նաև Համաշխարհային Բանկի «Գործարարությամբ զբաղվելը» գեկույցի ցուցանիշների բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը, որոնցից առավելապես և անմիջականորեն ազդեցություն են կրում ՓՄՁ սուբյեկտները՝ պայմանավորված իրենց առանձնահատկություններով և գործարար միջավայրի պայմանների նկատմամբ զգայունությամբ:

«Գործարարությամբ զբաղվելը» գեկույցը գնահատում է այն կարգավորումները, որոնք ուղղակիորեն ազդում են գործարար միջավայրի վրա, այդ թվում՝ ՓՄՁ ոլորտի վրա՝ հնարավորություն տալով իրականացնել միջերկրային համեմատություններ հետազոտված 189 երկրների միջև հետևյալ 10 ոլորտներում՝

- ընկերությունների հիմնում,
- շինարարական թույլտվությունների ստացում,
- սեփականության գրանցում,
- վարկերի ստացում,
- էլեկտրականության միացում,
- ներդրողների պաշտպանություն,
- հարկերի վճարում,
- արտաքին առևտուր,՝ պայմանագրերի կիրարկում,
- սնանկության ճանաչում:

Շարունակական բարեփոխումների իրականացման արդյունքում «Գործարարությամբ զբաղվելը 2015» գեկույցում Հայաստանը գրանցել է առաջընթաց, ինչն իր դրական ազդեցությունն է ունեցել նաև ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների վրա, մասնավորապես.

- Հայաստանը 189 երկրների շարքում բարելավել է իր դիրքը 4 կետով՝ վերագնահատված արդյունքներով 49-ից բարձրանալով 45-րդ տեղը:
- Զեկույցի տվյալներով Հայաստանի գործարար միջավայրը լավագույնն է ԱՊՀ երկրների շարքում և երկրորդն է տարածաշրջանում՝ զիջելով միայն Վրաստանին:
- Զեկույցի տվյալներով՝ Հայաստանի գործարար միջավայրն ավելի բարենպաստ է

Հայաստանը «Հեռավորությունը սահմանագծից» ցուցանիշով գրանցել է 70.6 միավոր, իսկ վարկանիշային աղյուսակի առաջին հորիզոնականը զբաղեցնող Սինգապուրը՝ 88.3:

«Գործարարության գեաղվելը» զեկույցի 2015թ. ըստ 10 ոլորտների, ինչպես նաև այլ երկրների համեմատական ցուցանիշները ներկայացված են Հավելված 1-ի 5-7-րդ աղյուսակներում:

2.4. ՓՄՁ զարգացման խորհրդի դերը

ՓՄՁ ոլորտում իրականացվող շարունակական բարեփոխումներն առավել հասցեական և արդյունավետ դարձնելու, ինչպես նաև պետություն-մասնավոր հատված երկխոսությունն ուժեղացնելու նպատակով ՀՀ վարչապետի 2011 թվականի հուլիսի 7-ի N638Լ որոշմամբ ստեղծվել է ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհուրդ, որի նախագահը՝ ՀՀ վարչապետն է: Խորհրդի կազմում ընդգրկված են ՀՀ էկոնոմիկայի նախարարը, ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալը, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) Երևանի գրասենյակի ղեկավարը, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Երևանի գրասենյակի ղեկավարը, ինչպես նաև գործարար համայնքի ներկայացուցիչներ:

ՓՄՁ զարգացման խորհուրդը խորհրդատվական-խորհրդակցական մարմին է, որը պետական մարմիններ փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում գործարար միջավայրի զարգացման հարցերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու նպատակով գործարար համայնքի հետ համատեղ իրականացնում է անհրաժեշտ միջոցառումներ: Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ, ինչպես նաև՝ անհրաժեշտության դեպքում, արտահերթ նիստերի միջոցով: Խորհրդի նիստերին մասնակցում են նաև հրավիրված պետական մարմինների ներկայացուցիչները, ինչպես նաև ՎՋԵԲ փորձագետները: ՀՀ վարչապետի նախագահությամբ գործող ՓՄՁ զարգացման խորհրդի քարտուղարության աշխատանքներն իրականացվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից: Որպես դրական արդյունք՝ ՓՄՁ Խորհրդի կողմից լուծված հարցերից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Նվազեցվել է էլեկտրոնային ստորագրության սակագինը:
2. ՀՂՄ-ներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը հարկային տեսչություն 12 անգամից կրճատվել է և դարձել տարեկան 4 անգամ:
3. Մշակվել է գերփոքր և փոքր ձեռնարկատերերի համար «Կազմակերպության կողմից եկամտահարկի հաշվարկ»-ի և «Գործատուների պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվետվություն»-ների միասնական ձև:
4. Պարզեցվել է անհատ ձեռնարկատերերի լուծարման գործընթացը:
5. Պարզեցվել է բազմաբնակարան շենքում գտնվող բնակարանի նպատակային նշանակությունը որպես գրասենյակ փոխելու գործընթացը:
6. Կատարելագործվել է ՀՀ մաքսային տարածքով ապրանքների և տրանսպորտային միջոցների տարանցիկ փոխադրման գործընթացը:
7. Իրականացվել է արտոնագրային վճար վճարող համարվողների հարկային բեռի և վարչարարության թեթևացում:
8. Հստակեցվել է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայողների կողմից արգելանքը միայն վիճարկվող գումարի չափով կիրառելու խնդիրը:
9. Կատարելագործվել է իրավաբանական անձի գրանցման գործընթացը՝ տեղեկացման թերթիկի ներդրմամբ:
10. ՀՀ Մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված տուգանքը դարձվել է կատարված արարքին համաչափ:
11. Իրականացվել է հավաքական բեռի փոխադրման կանոնների մշակում:
12. Ընդունվել է «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքը:
13. Սննդամթերքի ներմուծման համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման կարգի պարզեցում:
14. Բարելավվել է «Նոր սերնդի» ՀՂՄ-ների ձեռքբերման պայմանները ՓՄՁ-ների համար:
15. Ընտանեկան ձեռնարկատիրության շրջանակներում ներդրվել է հարկման արտոնյալ համակարգ:
16. Պարզեցվել է ապրանքի ծագման երկրի սերտիֆիկատի և փորձաքննության ակտի ստացման գործընթացը:
17. Ընդունվել է «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը:

ՓՄՁ խորհուրդը որպես հարթակ կհանդիսանա 2016-2018թթ. համար սահմանված ՓՄՁ ռազմավարական նպատակների շրջանակներում անհրաժեշտ աշխատանքների և միջոցառումների մշակման, քննարկման, լուծման ենթակա հարցերի ուսումնասիրության իրականացման համար: Խորհրդի միջոցով կապահովվի իրականացված միջոցառումների արդյունավետության և կատարված աշխատանքների հաշվետվողականությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խորհրդի կազմում ընդգրկված են ոչ միայն մասնավոր հատվածի ներկայացուցիչներ, այլև դրանց մեծ մասը ներկայացնում են բազմաթիվ անդամներ ունեցող կազմակերպություններ:

3. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ռազմավարական նպատակները և գործողությունների հիմնական ուղղությունները

Փոքր և միջին կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության տնտեսության բոլոր ոլորտներում զբաղեցնում են կարևոր դիրքեր՝ դրանցից մի քանիսում կազմելով համապատասխան ոլորտների հիմքը: ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվական բազայի տվյալների համաձայն՝ ՓՄՁ-ները 2014թ. ընթացքում աշխատանքով ապահովել են մոտ 370 հազար մարդու (աշխատողների քանակն ըստ ոլորտների ներկայացված է Հավելված 1-ի Աղյուսակ 2-ում): Հատկապես այն ոլորտներում, որտեղ ՓՄՁ-ներն արտադրողականությունը համեմատելի է խոշոր կազմակերպությունների արտադրողականության հետ (այդպիսի ճյուղերն են արդյունաբերությունը, հասկապես մշակող արդյունաբերությունը, շինարարությունը, ծառայությունների և անհատական ծառայությունների ոլորտները), դրանք տնտեսական աճի ապահովման, արտահանման աճի, աշխատատեղերի ստեղծման և մասնավոր ներդրումների ներգրավման կարևոր աղբյուր են: Այսպիսով՝ նոր ՓՄՁ-ների ստեղծումը և հաջող, կայուն գործունեության խրախուսումը, զարգացումը Հայաստանի Հանրապետությունում տնտեսական քաղաքականության գերակայություններից են:

ՓՄՁ-ների ուղղակի աջակցությունը կարևորվում է նաև այն պատճառով, որ մանր և միջին կազմակերպությունների թվի ավելացումը երկրում միջին խավի ձևավորման կարևոր գործոն է: Այս առումով պետք է հետևողականորեն իրականացվեն հատուկ քաղաքականության միջոցառումներ, որոնք աջակցելու են միջին խավի ձևավորմանը, տնտեսությունում սեփական գործարար նախաձեռնություններ իրականացնող

անձանց խրախուսման ու աջակցությանը:

ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության գերակայությունը հանդիսացող ՓՄՁ ոլորտի զարգացման ուղղված 2016-2018թթ. ընթացքում ՓՄՁ-ների ուղղակի աջակցության հիմնական քաղաքականության նպատակը դիմամիկ և զարգացող ՓՄՁ ոլորտն է, որտեղ տնտեսվարողները կարող են իրավական դաշտում սկսել և զարգացնել իրենց գործունեությունը օրենսդրական և վարչարարական նվազագույն խոչընդոտներով:

Ելնելով վերոգրյալից՝ որպես ՓՄՁ զարգացման 2016-2018թթ. ռազմավարության առաքելություն կարելի է սահմանել գործարար միջավայրի և ձեռնարկատիրական մշակույթի բարելավումը, որի նպատակը կայուն ՓՄՁ սուբյեկտների ստեղծումը և աճը ապահովելն է: Իսկ որպես ռազմավարական հիմնական նպատակ կարելի է շեշտադրել ՀՀ-ում մրցունակ ՓՄՁ ոլորտի ձևավորումն ու զարգացումը:

Ռազմավարական նպատակների և դրանց իրականացման ուղղությամբ նախանշվող գործողությունների ուղղությունների բացահայտումն ու առանձնացումը կատարվել են հանրապետությունում ՓՄՁ ոլորտի իրավիճակի ուսումնասիրության և դրա վերլուծության հիման վրա, որի ընթացքում օգտագործվել են գործարար ասոցիացիաների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ մի շարք քննարկումների արդյունքում վերհանված խնդիրների լուծման հնարավոր ուղիները, ԵՄ ՓԲԱ ուղղությունների քաղաքականությունների գնահատականները, ՏՀԿԿ կողմից իրականացված SWOT վերլուծության արդյունքները:

Ռազմավարական նպատակ 1 - Ինստիտուցիոնալ, օրենսդրական և գործառնական միջավայրի բարելավում ՓՄՁ-ների ստեղծման և զարգացման համար:

Առաջին ռազմավարական նպատակը առնչվում է ՓՄՁ ոլորտի զարգացման հետևյալ խնդիրների լուծմանը՝

1. ՓՄՁ սուբյեկտների զարգացման համար ստեղծել բարենպաստ գործարար միջավայր և հարկային դաշտ:
2. Ապահովել այնպիսի միջավայր, որտեղ բարեխիղճ տնտեսվարողները, ովքեր բախվել են սնանկությանը, կարող են հեշտությամբ երկրորդ հնարավորություն ստանալ:
3. Կարգավորումները իրականացնել «Սկզբում մտածեք փոքր» սկզբունքին համապատասխան:
4. Բարձրացնել ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորման հասանելիությունը, ձևավորել այնպիսի օրենսդրական և գործառնական միջավայր, որը կնպաստի առևտրային գործարքների ժամանակին վճարմանը:

Բավարար մարդկային և նյութական ռեսուրսների ներգրավվածության խիստ սահմանափակությամբ պայմանավորված՝ ՓՄՁ սուբյեկտների համար բացի բարենպաստ օրենսդրական դաշտի առկայությունից, հաճախ ոչ պակաս կենսական կարևորություն է ունենում օրենսդրական կայունությունը: Սահմանված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է հնարավորինս պարզեցնել գործող օրենսդրությունը և իրավական կարգավորումները: Հաճախակի օրենսդրական փոփոխություններով պայմանավորված՝ ՓՄՁ սուբյեկտներն էական դժվարություններով են յուրացնում նոր իրավական կարգավորումները, դրանց կիրարկումը բավական երկար ժամանակ ընթանում է խախտումներով և ոչ ճիշտ իրականացմամբ, ինչը հանգեցնում է անցանկալի հետևանքների: Հաճախ կատարվող փոփոխությունները գրկում են ՓՄՁ սուբյեկտներին իրենց գործունեությունը մշտապես իրականացնել գործող օրենսդրության բոլոր պահանջներին համապատասխան և պլանավորել իրենց հետագա գործողություններն ու զարգացման ծրագրերը տվյալ պահին առկա իրավիճակի հիման վրա: Մի կողմից նման բարդությունները հանգեցնում են տնտեսվարողների համար գործառնական մթնոլորտի ոչ բարենպաստ և ընկալելի իրավիճակի, երբ նրանք ի վիճակի չեն լինում իրականացնելու համապատասխան գործողություններ՝ ապահովելու նոր պահանջների կատարումը, սուղ նյութական և մարդկային ռեսուրսները ստիպված են լինում ուղղել նոր օրենսդրական փոփոխությունների պահանջների ուսումնասիրությանն ու դրանք իրագործելուն: Մյուս կողմից, նման իրավիճակը չի նպաստում կայունության առկայությամբ ապահովված դրական սպասումների ձևավորմանն ու դրա հիման վրա ձեռներեցությամբ, նոր գործարար նախաձեռնությունների իրագործմանը, նոր ստեղծվող ընկերությունների հիմնադրմանը և ՓՄՁ սուբյեկտների քանակական և որակական աճին:

Այս առումով կարևորություն է ստանում օրենսդրական կայուն դաշտի ստեղծումը կարճաժամկետ առումով, երբ ՓՄՁ ոլորտի տնտեսվարողներն առաջիկա երեք տարիների կտրվածքով հնարավորություն կունենան իրենց գործունեությունն իրականացնել անփոփոխ և արդեն իսկ ծանոթ օրենսդրական դաշտում:

ՓՄՁ սուբյեկտներին գործառնական աջակցությունը կներառի ոլորտի տնտեսվարողների համար առօրյա գործունեության ընթացքում առաջացող խնդիրների լուծմանն ուղղված օժանդակություն:

Նման օժանդակությունը կիրականացվի տնտեսական գործունեության հիմնական ուղղություններով խորհրդատվության, աջակցության և ֆինանսատնտեսագիտական և շուկայագիտական մասնագիտական աջակցության ապահովման միջոցով:

Նշվածի իրականացման համար կստեղծվեն աջակցության և խորհրդատվության ապահովման այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կընձեռեն տնտեսվարողներին առաջարկելու կոնկրետ սուբյեկտի գործունեության ընթացքում առաջացող կոնկրետ խնդիրների լուծման ուղիների բացահայտման և այդ լուծումներն իրագործելու եղանակներն ու միջոցները:

Տվյալ ուղղությամբ իրականացվող միջոցառումները կներառեն հասցեական և առանձին իրավիճակային բնույթ ունեցող գործնական աջակցության գործողություններ, որոնք կիրականացվեն ՓՄՁ սուբյեկտների պահանջների և հարցումների հիման վրա: Որպես հիմնական քայլեր կարելի է առանձնացնել հետևյալը.

- ՓՄՁ-ների հիմնադրման և ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովումը,
- ՓՄՁ ոլորտում Հայաստանում իրականացվող քաղաքականության և աջակցման ծրագրերի լուսաբանումը,
- Օրենսդրական փոփոխություններին մասնավոր հատվածի ակտիվ ներգրավվածության ապահովում:

Ռազմավարական նպատակ 2 - ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսավորման հասանելիության բարելավում

Ռազմավարական երկրորդ նպատակը նախատեսում է բարձրացնել ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսավորման հասանելիությունը և զարգացնել այնպիսի օրենսդրական և գործառնական միջավայր, որը կնպաստի առևտրային գործարքների ժամանակին վճարմանը:

Հաշվի առնելով ՓՄՁ սուբյեկտների առանձնահատկությունները՝ նրանց համար հաճախ հասանելի չեն լինում ֆինանսավորման բոլոր այն միջոցներից օգտվելու հնարավորությունները, որոնք հասանելի են ավելի խոշոր տնտեսվարող սուբյեկտներին, հետևաբար ֆինանսական միջոցների սակավությունը ու համապատասխան ծավալով ներգրավումը շարունակում են մնալ ՓՄՁ սուբյեկտների օրակարգում: Սույն

խնդիրների լուծման նպատակով անրաժեշտ է մշակել լրացուցիչ ֆինանսական գործիքներ, որնցից կարող են արդյունավետորեն օգտվել և օգուտ քաղել ՓՄՁ սուբյեկտները: Հատկապես ֆինանսավորման հասանելիության բարձրացման անհրաժեշտությունը մեծ է սկսնակ գործարարների համար:

Շատ հաճախ տնտեսվարող սուբյեկտները տեղեկացած չեն լինում շուկայում առաջարկվող տարբեր ֆինանսական գործիքներին: Սահմանված նպատակին հասնելու և նշված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Ֆինանսական շուկայում առկա գործիքների վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտների իրազեկվածության ապահովում,
- ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական միջոցների պահանջի ուսումնասիրություն,
- ՓՄՁ սուբյեկտներին մատչելի վարկերի տրամադրման շարունակություն,
- ՓՄՁ սուբյեկտների վարկային պարտավորությունների երաշխիքների տրամադրում,
- Նոր ստեղծվող ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսական միջոցների ներգրավման հնարավորությունների խորհրդատվության տրամադրում,
- Գործարար ծրագրերի կազմման աջակցություն և ուսուցում:

Ռազմավարական նպատակ 3 - Ձեռնարկատիրական կարողությունների (մշակույթի) խթանում և զարգացում

Ռազմավարական երրորդ նպատակը վերաբերում է ՓՄՁ սուբյեկտների կարողությունների արդիականացմանը և նորարարությունները խթանելուն նպաստմանը:

Գործարար միջավայրի բարելավման գլխավոր նախապայմաններից մեկը ձեռնարկատիրական մշակույթի զարգացումն է: Ներկա իրավիճակի ուսումնասիրության հիման վրա պարզ է դարձել, որ անհրաժեշտ է շարունակել ձեռնարկատիրական կրթության ուսումնառությունը ինչպես դպրոցներում, այնպես էլ բարձրագույն ուսումնական հաստատություններում, մասնագիտական կրթության և ուսուցման ընթացքում: Ձեռնարկատիրական կրթության զարգացման ուղղությամբ մասնավոր հատվածի և ուսումնական հաստատությունների համագործակցությունը հնարավորություն կտա աշակերտներին և ուսանողներին գիտելիքներ և փորձ ձեռք բերել սեփական բիզնես նախաձեռնություններ սկսելու, ինչպես նաև միմյանց հետ արդյունավետ համագործակցելու նպատակով:

Տնտեսական արդի իրողության մեջ անմերժելի է գիտական նվաճումների, ուսումնասիրությունների, ժամանակակից մտտեցումների և նորարարական արդյունքի կիրառման անհրաժեշտությունը՝ արդյունավետ, մրցունակ և կայուն տնտեսվարման ապահովման տեսանկյունից: Այս հրամայականն առավել կարևոր է դառնում ՓՄՁ սուբյեկտների համար, ելնելով փոքր և միջին ընկերություններին բնորոշ առանձնահատկություններից, երբ նման ընկերությունները չեն կարողանում ֆինանսավորել նորարարական մեթոդների կամ արդյունքի, արտադրանքի մշակումն ու ստեղծումը, մյուս կողմից նույն առանձնահատկություններից ելնելով չեն կարողանում ներդնել նորարարական մեթոդները, արդյունք և տեխնոլոգիաներ: Այս համատեքստում առաջանում են երկու հիմնական բացեր. կառավարման ոլորտում նորարարական մեթոդների բացակայություն և նորարարական տեխնոլոգիաների ներդրման բացակայություն, նորարարական արդյունքի ստեղծման ցածր մակարդակ: Այս բացերը լրացնելու համար կպահանջվի ներքոհիշյալ միջոցառումների իրականացումը.

- Ձեռնարկատիրական կարողությունների զարգացում,
- Տնտեսվարող սուբյեկտների (բիզնես սառցացիաների) և ուսումնական հաստատությունների միջև համագործակցության խթանում և ուժեղացում,
- ՓՄՁ-ների կողմից նորարարական հետազոտությունների և տեխնոլոգիաների, արդյունքի ստեղծման ու ներդրման համար ֆինանսական մատչելի գործիքների ստեղծումը, երկարաժամկետ վարկերի տրամադրումը առանձին նպատակային ծրագրերի միջոցով,
- ՓՄՁ-ների կողմից նորարարական արտադրանքի արտադրության համար բարենպաստ պայմանների ստեղծումը՝ գիտական և խորհրդատվական կազմակերպությունների ներգրավմամբ, ֆինանսական երկարաժամկետ մատչելի վարկային ռեսուրսների տրամադրումը:

Ռազմավարական նպատակ 4 - ՓՄՁ սուբյեկտների ներքին և արտաքին մրցունակության բարձրացում

Ռազմավարական չորրորդ նպատակը առնչվում է հետևյալ խնդիրների լուծմանը՝

1. Ստեղծել այնպիսի գործարար միջավայր, որտեղ կազմակերպությունները կարող են բարգավաճել:
2. Օգնել ՓՄՁ սուբյեկտներին օգուտներ քաղել ԵՄ և ԵՏՄ միասնական շուկաների ընձեռած հնարավորություններից:
3. Խրախուսել և աջակցել ՓՄՁ սուբյեկտներին՝ օգտվելու շուկաների ընդլայնումից:
4. Խրախուսել ՓՄՁ սուբյեկտների ռեսուրսարդյունավետ գործունեությունը և “կանաչ” արտադրանքի/ծառայությունների

առաջարկի մեծացումը:

ՓՄՁ սուբյեկտների զարգացմանն ուղղված քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի վերջիններիս կայուն և մրցունակ դարձնելուն ինչպես տեղական, այնպես էլ միջազգային շուկաներում: Տեղական արտադրանքի խթանում և տեղական ապրանքանիշերի առաջնորման նպատակով աջակցություն կցուցաբերվի տեղական ռեսուրսների վրա հիմնված ապրանքների և ծառայությունների զարգացմանը: ՓՄՁ սուբյեկտների կողմից իրականացվող արտահանման խթանման համար անհրաժեշտ են իրենց գործունեության միջազգայնացմանն ուղղված գործողությունների իրականացում, որոնք մեծամասամբ հասանելի չեն ՓՄՁ սուբյեկտներին՝ հաշվի առնելով նման գործողությունների իրականացման հետ կապված բարդությունները ֆինանսական և մասնագիտական տեսանկյուններից: Նշված բարդությունների հաղթահարման նպատակով 2013թ-ին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հինադրվել է «Հայաստանի արտահանման

ապահովագրական գործակալությունը», որի առաքելությունը ՀՀ արտահանման ոլորտի խթանումն է: Ընկերության հիմնական նպատակներն են.

1. Խթանել արտահանումը՝ ապահովագրելով արտահանողներին օտարերկրյա գնորդների չվճարման ռիսկից:
2. Նպաստել մատչելի և հասանելի ֆինանսական ռեսուրսների տրամադրմանը փոքր և միջին ձեռնարկություններին:
3. Նպաստել արտահանման առևտրային ռիսկերի ապահովագրության մասնավոր շուկայի զարգացմանը:

Գործակալության կողմից իրականացվում են շարունակական քայլեր՝ նոր գործիքների մշակմանն ուղղված, որոնք հնարավորություն կտան նաև ՓՄՁ սուբյեկտներին լուծելու շրջանառու միջոցների հետ կապված խնդիրները:

ՓՄՁ սուբյեկտների միջազգայնացմանն ուղղված հետագա քայլերը կներառեն հետևյալը.

- ՓՄՁ սուբյեկտների արտադրանքի միջազգայնորեն ընդունված ստանդարտներին համապատասխանեցնելու գործողություններ,
- Արտադրանքի արտահանման համար կարողությունների հզորացում, մասնագիտական խորհրդատվական ծառայությունների մատուցում, արտերկրում անցկացվող ցուցահանդեսներին, գործարար համաժողովներին մասնակցության աջակցություն,
- Արտահանման գործարքների ֆինանսավորման և ապահովագրման նպատակային ծրագրերի մշակում և իրականացում,
- Արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ-ների բացահայտում և նրանց կարողությունների հզորացում:

Ռազմավարական նպատակ 5 – Պետություն-մասնավոր հատված երկխոսության բարելավում

Ռազմավարական սույն նպատակը վերաբերում է պետական կառավարումը ՓՄՁ կարիքներին արձագանքող դարձնելուն: ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով կարիք կա զգալիորեն ընդլայնել և ուժեղացնել պետություն-մասնավոր հատված երկխոսությունը, որտեղ կարևոր դեր ունեն թիզնես ասոցացիաները, որոնք միջնորդ են և բազմաթիվ ղեկավարում հենց իրենք են նախաձեռնում սովալ երկխոսությունը: Պետություն-մասնավոր հատված երկխոսությունը պետք է կառուցել փոխզիջման, վստահության և փոխընթացման վրա: Այս առումով ՓՄՁ զարգացման ռազմավարությունը կհանդիսանա լրացուցիչ խթան՝ զարգացնելու սովալ երկխոսությունը՝ ՓՄՁ ոլորտի խթանմանն ուղղված իրականացվելիք միջոցառումներին մասնավոր հատվածի ակտիվ ներգրավվածության ապահովմամբ: Ձեռնարկատերերի, գործատուների և թիզնես ասոցացիաների ակտիվ մասնագությունը պետական քաղաքականության իրականացմանը կարևոր է նաև այդ քաղաքականության թափանցիկության, որակի և արդյունավետության ապահովման տեսանկյունից:

Հաշվի առնելով ներկայիս իրավիճակը՝ պետություն-մասնավոր հատված երկխոսության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ կլինի իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Օրենսդրական փոփոխությունների իրականացման ընթացքում ակտիվ հանրային քննարկումների իրականացում տարբեր միջոցներով,
- Իզնես-ասոցացիաների ակտիվ մասնակցության ապահովում և իրականացված միջոցառումների վերաբերյալ հետադարձ կապի ապահովում:

ՓՄՁ ոլորտում իրականացվող քաղաքականության և ոլորտի գործունեության մասին հաղորդակցության մակարդակի բարձրացումը կարևորվում է նաև ՓՄՁ սուբյեկտների համար իրենց գործունեությանն առնչվող տեղեկատվության մատչելիության և իրազեկվածության ապահովման տեսանկյունից: Հաճախ, ՓՄՁ սուբյեկտները, չունենալով բավարար մարդկային և նյութական ռեսուրսներ, հնարավորություն չեն ունենում պատշաճ կերպով իրազեկ լինել ոլորտում իրականացվող պետական քաղաքականության, իրագործվող ծրագրերի, զարգացումների և միտումների մասին: Դրանով պայմանավորված ՓՄՁ սուբյեկտները կորցնում են արդյունավետ գործելու իրենց ներուժային հնարավորությունների որոշակի մասը, ինչը ընդհանուր առմամբ բացասաբար է ազդում ոլորտի զարգացման վրա:

Իրազեկվածության պատշաճ մակարդակի ապահովման պարագայում ՓՄՁ սուբյեկտները հնարավորություն կունենան օգտվելու այն բոլոր հնարավորություններից, որոնք ընձեռում են ոլորտում իրականացվող ծրագրերն ու միջոցառումները, աջակցման գործիքները, պատրաստ կլինեն իրենց գործունեության առավել արդյունավետ և ճկուն պլանավորման, ինչը թույլ կտա լինել մրցունակ և արդի զարգացումներին ու իրավիճակին մշտապես համապատասխանող դիրքում:

Ռազմավարական նպատակ 6 – ՓՄՁ ոլորտի զարգացմանն աջակցող կառույցների ուժեղացում

ՓՄՁ ոլորտի զարգացման աջակցող կառույցների արդյունավետ գործունեության ապահովման նպատակով անհրաժեշտ է սերտ համագործակցության ապահովում ինչպես միմյանց, այնպես էլ պետական մարմինների հետ: ՓՄՁ զարգացման տարեկան միջոցառումների իրականացման շրջանակներում նախատեսվում է ներգրավել տարբեր թիզնես ասոցացիաների և պետական հատվածի ներկայացուցիչներին՝ սույն ռազմավարության մեջ արտացոլված բոլոր նպատակների իրականացումն ապահովելու նպատակով: Ակնկալվում է նաև այդ ՓՄՁ զարգացման խորհուրդը որպես հարթակ կիրառել նշված նպատակների և համապատասխան գործողությունների իրականացման համար: Անհրաժեշտ է նաև ակտիվորեն ներգրավել պետական հատվածի տարբեր ներկայացուցիչներին՝ հաշվի առնելով, որ ՓՄՁ ոլորտին առնչվող տարբեր օրենսդրական կարգավորումներ իրականացվում են տարբեր մարմինների կողմից, այդ աշխատանքներում ներգրավել նաև մարզպետարաններին և համայնքների ղեկավարներին, քանի որ, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 6-րդ կետի՝ համայնքի ղեկավարը պետք է առաջարկություններ ներկայացնի Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման տարեկան ծրագրում համայնքի մասնակցության մասին:

Ռազմավարական նպատակ 7 – Կանանց ձեռներեցության խթանում, ինչպես նաև սկսնակ գործարարներին աջակցության տրամադրում

Սույն նպատակի սահմանումը չի եթադրում, որ այլ ռազմավարական նպատակներն իրագործելիս չպետք է հաշվի առնել կանանց ձեռներեցության խթանումն ու սկսնակ գործարարներին աջակցության տրամադրումը: Առանձին նպատակի սահմանումը եթադրում է այս խնդիրներին լրացուցիչ ուշադրության առանձնացումը: Ներկայումս կանանց ձեռներեցության վերաբերյալ բացակայում են վիճակագրական տվյալներ, որոնք հնարավորություն կընձեռեն վերջիններին կարգազման քաղաքականությունն արդյունավետորեն իրականացնել, սակայն ՓՄՁ սուբյեկտներին աջակցության տարեկան ծրագրերի շրջանակներում իրականացվում են մի շարք միջոցառումներ՝ ուղղված կանանց ձեռներեցությանը, նրանց գործունեության խթանմանը: 2016-2018թթ. ընթացքում անհրաժեշտ է շարունակել և ընդլայնել կին ձեռներեցություն տրամադրվող ուղղակի աջակցության և խորհրդատվական միջոցառումները:

Սկսնակ գործարարներին աջակցության խթանումը կարևորվում է այն առումով, որ վերջիններս չունեն բավարար գիտելիքներ և փորձ, հաճախ չեն տիրապետում բավարար ֆինանսական միջոցների, ուստի պետության աջակցությունը կարող է զգալի դեր ունենալ նրանց կայացման և հետագա զարգացման համար: Սկսնակ գործարարներին աջակցությունը կարևորվում է նաև նոր աշխատատեղերի ստեղծման, գործազրկության մակարդակի կրճատման առումով: Այս նպատակի իրականացման համար նույնպես միջոցառումներ են նախատեսված փոքր

և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին աջակցության տարեկան ծրագրերով, որոնք նախատեսվում է շարունակել և ընդլայնել 2016-2018թթ. ընթացքում:

Անհրաժեշտ է նշել, որ ներկայացված բոլոր նպատակների իրականացմանն ուղղված բոլոր միջոցառումներին և գործողություններին, դրանց իրականացման ժամանակացույցերին մանրամասնորեն անդրադարձ կկատարվի փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին աջակցության 2016-2018թթ. տարեկան ծրագրերում, ինչպես նաև ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների տարեկան ծրագրերում:

Նշված նպատակների, ինչպես նաև ընդհանուր միջոցառումների իրականացման արդյունքում միջնաժամկետ (2016-2018թթ.) հեռանկարի համար տնտեսությունում ուղենիշ կլինի ՓՄՁ-ների արդյունքի բարձրացումը և ՀՆԱ-ում մինչև 40 տոկոսի կշռի կայուն ապահովման համար հիմքի ստեղծումը: ՓՄՁ-ների դիրքի ամրապնդումը և զարգացումը կարտահայտվի նաև դրանց մրցունակության մակարդակի բարձրացմամբ և դա բնորոշող հիմնական ցուցանիշով՝ աշխատանքի արտադրողականության աճով: Ներկայումս, կախված տնտեսության ճյուղից, Եվրամիության երկրների ՓՄՁ-ների արտադրողականությունը 3-ից 5 անգամ ավելի է հայկական ՓՄՁ-ների համանման ցուցանիշից: Միջնաժամկետ հատվածում նախատեսվում է տեղական ՓՄՁ սուբյեկտների այդ ցուցանիշն ավելացնել մինչև 2 անգամ՝ նպաստելով նաև արտահանման մեջ ՓՄՁ-ների արտադրանքի տեսակարար կշռի աճին:

Փոքր և միջին ձեռներեցության կայուն զարգացման գրավական հանդես կգա ՓՄՁ-ների նորարարական գործունեությունը, նորարարության և գիտելիքի, մարդկային կապիտալի զարգացման հիման վրա տնտեսական գործունեության իրականացումն ու գործարար նախաձեռնությունների իրագործումը: Միաժամանակ, կարևորվում է արտադրության հենքային և զերակա ճյուղերի բազմազանեցման քաղաքականությունը, այսինքն՝ ՓՄՁ-ների հիմնումը գիտության բազայի վրա՝ զարգացնելով այն ոլորտները, որտեղ կա գիտական ներուժ:

Նշված բոլոր ուղղություններն արդյունավետորեն իրագործելու համար անհրաժեշտ կլինի տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման ընթացքում պահպանել մրցակցության ապահովման, տնտեսվարողների համար հավասար պայմանների ստեղծման, իրավական բարենպաստ դաշտի ստեղծման սկզբունքները, ՓՄՁ-ների գործունեությունը կանոնակարգող օրենսդրության հնարավորինս քիչ փոփոխությունների իրականացումը, վարչարարության և վարչական կանոնակարգերի՝ ՓՄՁ-ներին առնչվող մասով հնարավոր մեղմ կարգավորումների նախատեսումը, միաժամանակ դրանց առանց խտրականության, հետևողական ու անշեղ կատարմամբ:

Հավելված 1 ՓՄՁ ոլորտի 2014թ. ցուցանիշներ

Աղյուսակ 1. ՓՄՁ սուբյեկտներ համարվող հարկ վճարողների քանակը

	գերփոքր	փոքր	միջին	Ընդամենը
	2014թ			
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	377	72	36	485
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	252	75	12	339
Մշակող արդյունաբերություն՝ այդ թվում	5629	678	184	6491
ոչ պարենային	3397	427	112	3936
պարենային	2272	260	73	2605
Շինարարություն	794	453	138	1385
Մեծածախ ել մանրածախ առևտուր. ավտոմեքենաների ել մոտոցիկլների նորոգում	42308	1151	169	43628
Փոխադրումներ ել պահեստային տնտեսություն	2248	272	53	2573
Կացության ել հանրային սննդի կազմակերպում	2443	385	74	2902
Տեղեկատվություն ել կապ	1182	247	53	1482
Կրթություն	296	161	55	512
Առողջապահություն ել բնակչության սոցիալական սպասարկում	879	294	145	1318
Մշակույթ, զվարճություններ ել հանգիստ	396	69	21	486
Այլ	11313	1251	201	12765
ԸՆԴԱՄԵՆԸ	68117	5109	1139	74365

Աղյուսակ 2. ՓՄՁ ոլորտում աշխատողների քանակ (միջին ցուցակային)

	գերփոքր	փոքր	միջին	Ընդամենը
	2014թ.			
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	1090	1657	4765	7512
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	958	1431	1431	3820
Մշակող արդյունաբերություն՝ այդ թվում	15654	15478	19580	50712
ոչ պարենային	9038	9452	11494	29984
պարենային	6714	6210	8152	21076
Շինարարություն	3374	10359	13865	27598
Մեծածախ եվ մանրածախ առևտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում	68618	25064	17217	110899
Փոխադրումներ եվ պահեստային տնտեսություն	4097	6571	4271	14939
Կացության եվ հանրային սննդի կազմակերպում	7651	9193	6574	23418
Տեղեկատվություն եվ կապ	3367	5598	5150	14115
Կրթություն	954	4066	5283	10303
Առողջապահություն եվ բնակչության սոցիալական սպասարկում	3623	6157	18523	28303
Մշակույթ, զվարճություններ եվ հանգիստ	999	1611	2138	4748
Այլ	26883	25903	21228	74014
ԸՆԴԱՄԵՆԸ	137268	113100	119901	370269

Աղյուսակ 3. ՓՄՁ սուբյեկտների շրջանառության ծավալները (մլն ՀՀ դրամ)

	գերփոքր	փոքր	միջին	Ընդամենը
	2014թ.			
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	1208	5261	13975	20443
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	1606	5289	5211	12107
Մշակող արդյունաբերություն՝ այդ թվում	43248	69340	87766	200354
ոչ պարենային	26842	44428	57678	128948
պարենային	16882	25285	30161	72328
Շինարարություն	11270	52331	73626	137228
Մեծածախ եվ մանրածախ առևտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում	286312	244828	250267	781408
Փոխադրումներ եվ պահեստային տնտեսություն	3682	17687	28833	50202
Կացության եվ հանրային սննդի կազմակերպում	7115	13972	15990	37077
Տեղեկատվություն եվ կապ	8528	18765	23646	50939
Կրթություն	695	2412	4009	7116
Առողջապահություն եվ բնակչության սոցիալական սպասարկում	2123	9181	26076	37381
Մշակույթ, զվարճություններ եվ հանգիստ	1185	1811	2659	5655

Այլ	50278	83670	92075	226024
ԸՆԴԱՄԵՆԸ	417251	524548	624135	1 565 934

Աղյուսակ 4. ՓՄՁ սուբյեկտների կողմից մուծած հարկեր (մլն ՀՀ դրամ)

	զերփոքր	փոքր	միջին	Ընդամենը
	2014թ.			
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	382	596	1765	2743
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	510	1411	1514	3435
Մշակող արդյունաբերություն՝ այդ թվում	5537	8807	13074	27417
ոչ պարենային	3655	6107	8265	18027
պարենային	1930	2757	4809	9495
Շինարարություն	2845	11335	15250	29429
Մեծածախ եվ մանրածախ առևտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում	27539	24258	21024	72821
Փոխադրումներ եվ պահեստային տնտեսություն	1873	5490	2987	10351
Կացության եվ հանրային սննդի կազմակերպում	2561	3044	3554	9159
Տեղեկատվություն եվ կապ	2165	4544	5693	12402
Կրթություն	159	846	1592	2597
Առողջապահություն եվ բնակչության սոցիալական սպասարկում	1260	1950	5413	8624
Մշակույթ, զվարճություններ եվ հանգիստ	317	367	836	1520
Այլ	12813	24079	20319	57212
ԸՆԴԱՄԵՆԸ	57961	87239	92510	237710

«Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի 2015թ. ցուցանիշներ

Աղյուսակ 5. Լավագույն գործարար միջավայրը ԱՊՀ երկրների շարքում³

ԵՐԿԻՐ	Հ ա յ ա ս --	Ղ ա զ ա խ ս	ո Բ ե լ	Ղ ր ղ զ ս	Մ ո լ ղ	Ռ ւ ս ս ս ւ ւ	Ռ ւ ս ւ ւ ւ ւ	Տ ա ջ ի կ ս	Ո ւ զ բ ե կ	Ա դ ր բ ե
2014-հրապարակված	37	50	63	68	78	92	112	143	146	70
2014-վերագնահատված	49	76	57	99	82	64	112	177	149	88
2015	45	77	57	102	63	62	96	166	141	80
Փոփոխություն- վերագնահատված ցուցանիշների համեմատ	+4	-1	0	-3	+19	+19	+16	+11	+8	+8

Աղյուսակ 6. Հայաստանի դիրքը տարածաշրջանում՝ 2-րդ տեղ

Երկիր	Վրաստան	Հայաստան	Ադրբեջան	Թուրքիա	Իրանի Բալանական Հանրապետություն
2014-հրապարակված	8	37	70	69	152
2014-վերագնահատված	14	49	88	51	132
2015	15	45	80	55	130
Փոփոխություն-վերագնահատված համեմատ	-1	+4	+8	-4	+2

Աղյուսակ 7. Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» 2014-2015 թվականների զեկույցներում Հայաստանի զբաղեցրած դիրքի համեմատական աղյուսակ

Ցուցիչ	Ր Հ ն ա	Ա ր ա տ ն ա ր ա ր հ	Ը ն կ ե հ ի մ , ն	Թ ն ի լ ա ր տ ն ա ր ա ր հ	Է լ ե ա ն ի ա ր տ ն ա ր ա ր հ	Ս ե փ ա կ զ ա ր ն ն ա	Պ ա լ ի ա ր տ ն ա ր ա ր հ	Վ ա ր տ ն ա ր ա ր հ	Ս ն ա ր տ ն ա ր ա ր հ	Կ ա ր տ ն ա ր ա ր հ
2014	73	124	5	82	132	7	119	30	67	25
2015	41	110	4	81	131	7	119	36	69	22
Փոփոխություն	+32	+14	+1	+1	+1	0	0	-6	-2	-1

Հավելված 2. Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ՏՀԶԿ և զարգացող երկրներում, նմանություններ և տարբերություններ

Ի տարբերություն բազմաթիվ միջազգային ռազմավարական մոտեցումներին, որոնք «մեկ լուծում բոլոր խնդիրներին» սկզբունքով փորձում են ընդհանուր մոտեցում ցուցաբերել տարբեր ՓՄՁ սուբյեկտներին, անհրաժեշտ է զանազանել, օրինակ, ձեռնարկատիրական ուղղվածությամբ ՓՄՁ-ներին և գոյատևման միտում ունեցող ՓՄՁ-ներին, բարձր տեխնոլոգիաների և նորարարության կողմնորոշմամբ ՓՄՁ-ներին և «թաքնված չեմպիոններին», միջին արդյունաբերական ուղղվածությամբ ՓՄՁ-ներին և փոքր արհեստագործական կամ առևտրային կողմնորոշում ունեցող բիզնեսներին: Տարբեր ՓՄՁ սուբյեկտներ պահանջում են տարբեր քաղաքականություն և գործիքներ, որպեսզի հաղթահարեն իրենց առանձնահատուկ խոչընդոտները:

Այսպիսով, ՓՄՁ զարգացման քաղաքականությունը Հայաստանում, ինչպես նաև շատ ՏՀԶԿ երկրներում հայտարարվել է որպես տնտեսության զերակայություն: Այդուհանդերձ, նրանց հաջողությունը կախված է մրցունակության լայն համակարգային համատեքստում խթանման ծրագրերի իրականացումից: ՏՀԶԿ երկրներում կազմակերպությունների 99%-ը ՓՄՁ-ներն են: Նրանք մասնակցում են տնտեսության մեջ հավելյալ արժեքի 2/3-ի ստեղծմանը:

ՏՀԶԿ երկրներում նոր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՓՄՁ-ները, ըստ էության, ինովացիոն ուժը չեն. ընդհանուր առմամբ նրանք ներդրում են նորամուծություններ, բայց ոչ այնքան, որքան խոշոր ընկերությունները: Նրանք, միջին հաշվով, ավելի քիչ են ներգրավված նոր ապրանքների բացահայտման կամ արտադրական գործընթացներում նորամուծությունների ներդրման մեջ: ՏՀԶԿ երկրներում ՓՄՁ-ների ինովացիոն ուժը առավելապես կենտրոնացած է մի շարք գիտելիքահեն կազմակերպությունների վրա, այդ թվում՝ արագ աճ ունեցող նոր ընկերությունների վրա: 2010թ. ՏՀԶԿ վերջին պաշտոնական ցուցանիշները ցույց են տալիս, որ ՏՀԶԿ 11 երկրներում բարձր աճի տեմպ գրանցվել է 10ից ավել աշխատակիցներ ունեցող կազմակերպությունների 2-8%-ի մոտ, մինչդեռ ինովացիոն փոքր (10 աշխատակցից քիչ) կազմակերպությունների դեպքում այդ ցուցանիշը կազմել է ընդամենը 1% (ՏՀԶԿ 2010, 24): Սա չի նշանակում, որ ՓՄՁ-ների զգալի մասը նորարարությամբ չի զբաղվում. զբաղվում է, բայց ավելի փոքր չափով:

ՏՀԶԿ երկրներում ՓՄՁ-ները հաճախ դասակարգվում են հետևյալ կերպ.

- բարձր պոտենցիալ ունեցող կազմակերպություններ գիտելիքահեն ոլորտներում, օրինակ՝ կենսատեխնոլոգիա, տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլն,
- թաքնված չեմպիոններ (օրինակ՝ Գերմանիայում), որպես մասնագիտացված միջին բիզնեսներ՝ արդյունաբերական արտադրանքի արտահանման բարձր ներուժով, օրինակ՝ հաստոցաշինության, էլեկտրատեխնիկական արտադրության կամ ավտոմոբիլային ոլորտում,
- միջին արդյունաբերական ՓՄՁ սուբյեկտներ, որոնք արտադրում են որոշակի արտադրական ապրանքներ կամ վերջնական արտադրանք տեղական ներքին շուկայի համար, օրինակ՝ տեքստիլի և կարի ոլորտում, կամ տարբեր արտադրական ոլորտներում,

տեղական ծառայություններ մատուցող և արհեստագործական կազմակերպություններ, օրինակ՝ սուպերմարկետներ, խանութներ, ատաղձագործարաններ և այլն, որոնք բավարարում են տեղական ներքին սպառողական ապրանքների պահանջարկը:

ՓՄՁ խմբային այս տարբերությունները կարող են կատարվել նաև զարգացող երկրներում, թեև մրցունակության բացթողումները հիմնականում մեծ են:

Դրա պատճառները պայմանավորված են ՓՄՁ-ների համար գիտելիքի, կրթության, շուկայի և ֆինանսավորման հասանելիության շատ ավելի թույլ միջավայրային պատճառներով: Կառուցվածքային և ֆիզիկական ենթակառուցվածքները նույնպես ավելի թույլ են: Սա ավելի է դժվարացնում ՓՄՁ-ների աճը զարգացող երկրներում:

Արտադրության և ծառայությունների ոլորտում շատ արտադրողներ և ինքնազբաղված մարդիկ կարող են բնութագրվել որպես գոյատևող ձեռնարկատերեր: Ձեռնարկատեր լինելու համար նրանց ընդհանուր առմամբ պակասում են հիմնական միջոցները, ինչպիսիք են դեպի շուկա միտումը, ձեռնարկատիրական կարողությունները, գործարար հնարավորությունների որոնումը: Նրանք հաճախ չունեն աճի նախադրյալներ, ինչպիսիք են բիզնես ռազմավարությունը կամ կառավարման տարրական հմտությունները: Այս կազմակերպությունները հազվադեպ են դառնում մրցունակ բիզնեսներ: Այդուհանդերձ, անհրաժեշտ կլինի ապահովել նրանց աջակցության կառույցներով և այնպիսի բիզնես միջավայրով, որը խթանում և կայունացնում է նրանց տնտեսական վիճակը: Դա ոչ միայն ներառում է ֆինանսավորման հասանելիությունը, այլև նոր աշխատատեղերի ստեղծման հնարավորությունների խթանումը, հմտությունների զարգացումը, ինչպես նաև շուկայական գիտելիքի և շուկայի մասին տեղեկատվությունը:

ՏՀԶԿ և զարգացող երկրներում ՓՄՁ-ների զարգացման շատ նման, բայց և շատ տարբեր խոչընդոտներ կարելի է հայտնաբերել: Այսպիսով՝

Նմանությունների մեծ մասը կապված է շուկայի և կառավարության քաղաքականության ձախողումների հետ: Կառավարության ձախողումները վերաբերում են.

- 1) բյուրոկրատական խոչընդոտներին, ՓՄՁ-ների համար գործող իրավական դաշտի թերություններին,
- 2) ՓՄՁ-ների աճը խթանող անհրաժեշտ ինստիտուցիոնալ և ֆիզիկական ենթակառուցվածքների պակասին,
- 3) պետության ձախողումների հաղթահարման ուղղված քաղաքականության բացակայությանը
- 4) որոշակի հանրային ապրանքների անհասանելիությունը և այն քաղաքականության բացակայությանը, որը կհաղթահարեր շուկայի ձախողումները:

Շուկայի ձախողումները վերաբերում են որոշակի ապրանքների մատակարարման բացակայությանը, որոնք չեն ապահովվում շուկայական հարաբերությունների միջոցով և պահանջում են որոշակի կառույցների աջակցություն: Շուկայական այս ձախողումները ներառում են օրինակ տեղեկատվության մատչելիության, հետազոտությանը և զարգացմանն ուղղված ներդրումների պակասը, որոշակի ծառայությունների հասանելիության բացակայությունը և նմանատիպ այլ խնդիրներ:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ ՏՀԶԿ և շատ զարգացող երկրներում ՓՄՁները փորձում են հաղթահարել պետական կառավարման ձախողումները, ինչպես նաև շուկայի ձախողումները որոշակի միջամտությունների միջոցով:

Տարբերություններ

Չնայած այս բոլոր նմանություններին՝ վերը նշված մարտահրավերներից շատերն ավելի ուժեղ են զարգացող երկրներում: Սա հիմնականում պայմանավորված է համակարգային մրցունակության տարբեր մարտահրավերներով, որոնք ի վերջո հանգեցնում են գիտելիքի ու քաղված դասերի հնարավորությունների ոչ ճիշտ օգտագործմանը: Մինչ շատ արդյունաբերական երկրներ ստեղծել են աջակցության մեխանիզմների և ինստիտուտների լայն տեսականի, շատ զարգացող երկրներ չունեն կայուն կառուցվածքային և ռազմավարական նման կառույցներ: Դա հաճախ ներառում է.

- Գոյություն ունեցող ՓՄՁ քաղաքականություններում դեպի մրցունակությանը կողմնորոշման պակաս: Հատկապես ՓՄՁ սուբյեկտների գործունեությունը ավելի հաճախ խթանվում է սոցիալական աջակցության մեխանիզմներով, քան ձեռնարկատիրական գործիքներով,
- Ընդհանրացված և նպատակային ՓՄՁ քաղաքականությունների պակաս, որոնք պետք է կենտրոնանան ՓՄՁ-ների մրցունակության բարելավման և ՓՄՁ-ների համար նպաստավոր միջավայրի ստեղծման ուղղությամբ,
- Գործարարության զարգացման ծառայությունների և աջակից կազմակերպությունների կառուցվածքային և մասնագիտական թույլ կողմերը,
- Վերևից ներքև և ներքևից վերև, ապակենտրոնացված աջակցող միջոցառումների միջև կապերի պակասը:
- ՓՄՁ-ների առումով զարգացող երկրներում դա հանգեցնում է.
- Գիտելիքահեն բիզնեսների պակասի,
- Մատակարարների և գնորդների միջև թույլ գործարար կապերի,
- Տեխնոլոգիաների և շուկայի, ինչպես նաև արտադրական գիտելիքի մատչելիության պակասի:
- ՏՀԶԿ երկրներում վերջին տասնամյակների ընթացքում ՓՄՁ ոլորտում առկա մարտահրավերները հաղթահարելու նպատակով մշակվել են բազմաթիվ ռազմավարություններ և ծրագրեր: Որպեսզի պարզ դառնա ՓՄՁ-ների զարգացման որակյալ քաղաքականությունների առանձնահատկությունը, արդյունավետ և ոչ արդյունավետ իրագործման տարբերությունը, անհրաժեշտ է ավելի ուշադիր դիտարկել հաջողության առնչվող տարբեր համակարգային տարրեր, գործոններ:

Ձեռնարկատիրական մակարդակում (միկրո մակարդակ) կարևոր է՝

- Խթանել մրցակցությունը ձեռներեցների միջև և խրախուսել նրանց շարունակաբար բարելավել իրենց արտադրանքը և արտադրական գործընթացները,
- Կենտրոնանալ ձեռներեցության հմտություններով կամ ներուժով օժտված պոտենցիալ անհատների մոտիվացիայի և աճի ներուժի վրա,
- Նպաստել ձեռներեցների, նրանց մատակարարների և գնորդների, ինչպես նաև, գիտելիքներ տրամադրողների միջև կապերի զարգացմանն ու ինքնակազմակերպմանը:

Չնայած ՓՄՁ-ները որոշակի առումով ունեն մրցունակ լինելու իրենց սեփական պատասխանատվությունը՝ նրանք ունեն կառուցվածքային աջակցության (մեզո մակարդակ) և աջակցող քաղաքականությունների (մակրո մակարդակ) կարիք:

Մեզո մակարդակում անհրաժեշտ են մասնագիտական և դեպի ուսուցումը միտված կազմակերպություններ, որոնք տրամադրում են ՓՄՁ-ների համար անհրաժեշտ աջակցություն: Դա ներառում է.

- Շուկայի միտվածությամբ գործարար կազմակերպություններ կամ կոոպերատիվներ, այլ ոչ թե սոցիալական միտվածությամբ

գործարար կապեր: Դա գործարարներին ապահովում է որոշակի ծառայությունների հասանելիությամբ, որն ավելին է, քան շահերի պաշտպանությունը: Այն բերում է շուկայի մասին տեղեկատվություն, հմտություններ, տեխնոլոգիա, ֆինանսներ և/կամ նոր շուկաների հասանելիություն: Մի շարք ՏՀՁԿ երկրներում, օրինակ Գերմանիայում, պալատները և այլ բիզնես կազմակերպություններ (ասոցացիաներ) ամուր դերակատարություն ունեն նման ծառայությունների տրամադրման, կամ ուսուցողական ծրագրերի զարգացման և որակի ապահովման հարցում:

- Կրթական, հետազոտական և զարգացման հաստատությունները, որոնք ապահովում են հմտությունների և կարողությունների զարգացում: Դա վերաբերում է ՓՄՁ-ների կարիքներին և խթանում է գիտելիքի հոսքը և նորարարությունը բիզնեսներում, որպեսզի բարելավվի նրանց մրցունակությունը շուկայում:
- Տեղական և տարածաշրջանային տնտեսական զարգացման գործակալությունները, որոնք հասկանում են տեղական գործարար կարիքները և ոլորտի հնարավորությունները և որոնք աջակցում են այդ մրցակցային առավելություններին ու հնարավորություններին՝ առաջխաղացման նախաձեռնությունների և այլ աջակցության մեխանիզմների միջոցով:

Բիզնեսների (միկրո մակարդակ) և աջակից հաստատությունների (մեզո մակարդակի) միջև հաջողված կապերը հնարավոր կլինեն, միայն եթե կան հաջողված քաղաքականություններ (մակրո մակարդակ), որոնք.

- ՓՄՁ սուբյեկտների համար ապահովում են բարենպաստ գործարար միջավայր, որտեղ երաշխավորված են սեփականության իրավունքը, մակրոտնտեսական կայունությունը, ինչպես նաև մրցակցային դաշտը,
- Աջակցում են կառուցվածքային և ֆիզիկական ենթակառուցվածքներին (ճանապարհներ, հանրային ծառայությունների մատչելիություն, գործարար ունեցվածք և այլն),
- Խթանում են ծրագրեր, որոնք աջակցում են հաստատություններին և կազմակերպություններին՝ ստանձնելու պատասխանատու դեր,
- Ստեղծում են քաղաքական բարենպաստ պայմաններ, որոնք թույլ կտան այդ բիզնեսներին հաղթահարել շուկայի և կառավարման ձախողումները:

Հավելված 3. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և մարտահրավերների (SWOT) վերլուծությունը Հայաստանի Հանրապետությունում

ՓՄՁ զարգացումը Հայաստանի տնտեսական մրցունակության ապահովման հիմնական անկյունաքարն է: Սկսած 2012 թվականից Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակական քայլեր է ձեռնարկում ՓՄՁ քաղաքականության բարելավման ուղղությամբ: Կարգավորումների պարզեցմանն ուղղված ջանքերը, ներառյալ մեկ պատուհանի կանգառի ներդրումը և էլեկտրոնային կառավարման ծառայությունների քանակական ընդլայնումը ՓՄՁ սուբյեկտների համար զգալիորեն կրճատվել են գործունեություն սկսելու խոչընդոտներն ու գործառնական ծախսերը: ՓՄՁ ՋԱԿ-ի կողմից տրամադրվող աջակցության ծառայությունները (այդ թվում՝ վարկային երաշխիքները) շարունակաբար ընդլայնվում են:

Չնայած արձանագրված մի շարք դրական փոփոխություններին՝ որոշ ոլորտներում դեռևս առկա են մարտահրավերներ, որոնցից մասնավորապես կարելի է առանձնացնել արտահանման հետագա խթանումը և ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսավորման հասանելիության ապահովումը:

ՓՄՁ ոլորտում իրականացված SWOT վերլուծությունը կունենա հետևյալ տեսքը.

Ուժեղ կողմերը վերաբերում են այն կարողություններին, որոնք թույլ են տալիս և նպաստում են ՓՄՁ սուբյեկտների աճին: Ուժեղ կողմերը կարևորվում են այն իմաստով, որ կարող են նպաստել հնարավորությունների իրագործմանը, թույլ կողմերի նվազեցմանը և մարտահրավերների կրճատմանը: ՀՀ-ում ՓՄՁ ոլորտում որպես ուժեղ կողմեր կարելի է առանձնացնել հետևյալը.

- Զգալի առաջընթաց գործարար միջավայրի բարելավման մեջ (Ըստ Համաշխարհային Բանկի «Գործարարությամբ զբաղվելը» 2015թ. զեկույցի՝ Արևելյան Գործընկերության անդամ երկրների ցանկում իրականացրած բարեփոխումների քանակով Հայաստանը զբաղեցրել է 2-րդ տեղը), բարելավված էլեկտրոնային կառավարում և կազմակերպության գրանցում մեկ պատուհանի կանգառի սկզբունքով,
- Արտահանման ուղղվածությունն ու ՓՄՁ զարգացումը տնտեսական քաղաքականության գերակայություններից են,
- Օրենսդրության պարզեցման և կարգավորման ազդեցության գնահատման ներդրման հաջողված փորձ,
- ՓՄՁ ուղղվածություն ունեցող ֆինանսական աջակցությունների լայն շրջանակ (ներառյալ վարկային երաշխիքներ),
- ՓՄՁ-ների կողմից նորարարության մեջ լավ արդյունքներ, լավ մշակված քաղաքականության շրջանակ, այդ թվում՝ ֆինանսական խթաններ,
- Աջակցության չափանիշները հիմնված են մոնիտորինգի և գնահատման կայուն համակարգի վրա, առկա է ֆինանսական աջակցության շահառուների թափանցիկություն,
- Ձեռներեցության բարձր ակտիվություն և խորաթափանցություն:

Հնարավորությունները լավ միջոց են ՓՄՁ-ների զարգացման և աճի օգտագործման համար: Նշված հնարավորությունները կարող են նպաստել գլխավորապես ՓՄՁ սուբյեկտների ներքին և միջազգային մրցունակության ապահովմանը: Դրանք են՝

- Մարդկային կապիտալ,
- Աճող արտահանումը (նախաճգնաժամային մակարդակ) հնարավոր է խթանել Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությամբ և Եվրամիության հետ առևտրի ընդլայնմամբ,
- Որոշակի կառուցվածքային փոփոխություններ տնտեսությունում. մշակող արդյունաբերության և ծառայությունների չափաբաժնի ավելացում ՀՆԱ-ում, զբաղվածության տեղաշարժեր, զարգացող տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ,
- ՓՄՁ զարգացմանն ուղղված դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող մի շարք ծրագրեր,
- Մեծ ներուժ ունեղոց հայկական սփյուռքի առկայություն,

- Ոչ բանկային աղբյուրներից ֆինանսավորման նախնական զարգացում,
- Օտարերկրյա ուղղակի ներդրումների համեմատական բարձր մակարդակը կարող է ուղղվել ՓՄՁ զարգացման ծրագրերին,
- Եվրամիության ծրագրերին մասնակցությունը (Ձեռնարկությունների Եվրոպական ցանցին և COSME ծրագրին անդամակցությունը):

Թույլ կողմերը էական թերություններ են, որոնք խոչընդոտում են ՓՄՁ-ների աճը: Դրանցից կարելի է նշել հետևյալները՝

- Հարկային վարչարարությունը դեռևս խոչընդոտ է ՓՄՁ սուբյեկտների համար,
- Մաքսային ընթացակարգերն ու առևտրի կարգավորումները շարունակում են խոչընդոտ հանդիսանալ արտահանման ծավալների ավելացման համար,
- ՓՄՁ սուբյեկտների սահմանման համեմատ վիճակագրական տվյալների հավաքագրման անհամատեղելիություն,
- Պետություն-մասնավոր հատված երկխոսության թերացում,
- ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորման հասանելիության դժվարություններ,
- Գործազրկության բարձր մակարդակ:

Մարտահրավերները կարող են վնասել ուժեղ կողմերին, արագացնել թույլ կողմերի զարգացումը և խոչընդոտել հնարավորությունների իրագործմանը: Որպես սպառնալիք կարող են հանդես գալ հետևյալ խնդիրները.

- Փոքր ներքին շուկա, ոչ բարենպաստ աշխարհագրական դիրք, ենթակառուցվածքներում առկա բացթողումները խոչընդոտ են արտահանման զարգացման համար,
- Զգալի ցնցում տարածաշրջանային զարգացումներից և կախվածություն դրամական փոխանցումներից,
- Արտահանման ֆինանսավորմանն ուղղված միջոցառումների բացակայություն,
- Դեռևս կազմակերպությունների աջակցության ծրագրերից կախվածություն,
- Ստվերային տնտեսության մեծ ծավալների առկայություն,
- Երևանից դուրս տարածքային զարգացման նախաձեռնությունների սակավություն,
- Որոշակի ապրանքային շուկաներում մրցակցության ցածր մակարդակի առկայություն:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՓՈՔԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ 2016-2018թթ. ՈՒՋՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱՆՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Անհրաժեշտությունը

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018թթ. ռազմավարության անհրաժեշտությունը պայմանավորված է ՓՄՁ ոլորտում միջնաժամկետ քաղաքականության մշակմամբ և իրականացմամբ, որտեղ հստակ սահմանված են առաջիկա երեք տարիների ՓՄՁ ոլորտի ռազմավարական նպատակները:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

ՓՄՁ զարգացմանն ուղղված քաղաքականությունն իրականացվում է ՓՄՁ սուբյեկտներին պետական աջակցության տարեկան ծրագրով, որտեղ ներկայացված են աջակցության ուղղությունները:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Ներկայումս տվյալ ոլորտում քաղաքականությունն իրականացվում է ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերով, որոնք մշակվում են մեկ տարվա համար և համարվում են կարճաժամկետ փաստաթուղթ, ինչը հնարավորություն չի տալիս սահմանել ոլորտում իրականացվող միջնաժամկետ և երկարաժամկետ քաղաքականության նպատակները, նախանշել աջակցության ծրագրերը, իրականացնել այդ ծրագրերի մոնիտորինգն ու գնահատումը:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

Կարգավորման նպատակը ՀՀ-ում գործող ՓՄՁ սուբյեկտների խնդիրներին առնչվող առավել համակարգված քաղաքականության իրականացումն է:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից՝ շահագրգիռ կողմերի հետ քննարկումների արդյունքում:

6. Ակնկալվող արդյունքը

ՓՄՁ զարգացման ռազմավարության հաստատումը հնարավորություն կտա ճիշտ սահմանել և թիրախավորել ոլորտում իրականացվող քաղաքականությունը, բարելավել աջակցության ծրագրերի մոնիտորինգն ու գնահատումը և ոլորտում առկա խնդիրների լուծման նպատակով խթանել տարբեր շահառուների միջև համագործակցությունը:



AFIC

